

Պարզվում է՝ զինծառայող Նարեկ Հակոբյանի հետ կապված սա երկրորդ միջադեպն է զորամասում: Օրեր առաջ նրա հետ փորձել են հաշիվներ մաքրել, սակայն ինչ-ինչ պատճառներով չի ստացվել: Ասում են՝ զինծառայողը մենակ չի եղել. երկրորդ անգամ մենակ է եղել, եւ հանցագործները կարողացել են գործը գլուխ բերել՝ սպանել են նրան:

Կարդացեք՝ էջ 4

Թրամփը երկարատեւ պատերազմ չի ուզում, չի ցանկանում զոհեր ունենալ, ընդամենը մտադիր է կարճ արդյունք արձանագրել՝ հաղթանակով դուրս գալով իր բոլոր նախընտրած սցենարներից: Ամերիկյան ռազմական գեներալները կասկածում են, որ նման կարճ օպերացիայով կարող են այդպիսի արդյունքի հասնել: Այդ տարաձայնություններն առկա են:

Կարդացեք՝ էջ 6

Եթե մեր ժողովուրդը հստակ արժեհամակարգերով առաջնորդվի, ապա անպայման դիմադրություն ցույց կտա այն երեւույթներին, որոնք խորթ են իր արժեհամակարգին, բայց քանի որ մեր ժողովուրդը չգիտի, թե ինչպիսի ընտանիքի մոդել է դավանում, ինչ պոպուլիստական քայլ ասես՝ անում են: Իսկ համեստությունն իրենց «վրով չի»:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 29 (4164), 28 փետրվար, շաբաթ, 2026

www.hraparak.am

ՔՊ-ի՝ կենսաթոշակային տարիքի հասած պատգամավորները ներկուսակցական ընտրություններից եւ նախընտրական ցուցակում ոչ առաջատար տեղ գրավելուց հետո լրջորեն հետաքրքրվում են, թե խորհրդարանի լիազորությունների ավարտից հետո ինչքան պատգամավորական թոշակ են ստանալու: Նրանցից մեկը մեզ հետ մասնավոր զրույցում չթաքցրեց, որ ակնկալում է պատգամավորի աշխատավարձին գրեթե հավասար թոշակ ստանալ: «Իզուր տեղն եմ այսքան թուքումուր կերել»,- բացատրում էր նա եւ կարծում էր, որ պետք է օրենքում փոփոխություն կատարել ու բարձրացնել թոշակները. ոչինչ չանող մի նախարար 7-8 միլիոն դրամ պարգեւավճար կստանա, նախկին պատգամավորները գոնե մի 500-600 հազար դրամ թոշակ չ՞են ստանա՝ հարցնում էր նա: Մենք պարզեցինք, որ պատգամավորական թոշակ ստանում են կենսաթոշակային տարիքում գտնվող այն նախկին պատգամավորները, որոնք մեկ ամբողջական ժամկետ պատգամավոր են եղել, դիցուք՝ նախորդ գումարման խորհրդարանը չավարտեց լիազորությունները՝ 2018-ի դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրություններ եղան, եւ այդ գումարման պատգամավորները պատգամավորության թոշակից զրկվեցին: Եթե այս խորհրդարանը մինչեւ նոր ընտրությունները չլուծարվի, ապա ներկայիս թոշակառու պատգամավորների բախտը կբերի, նրանք իրենց պատգամավորական աշխատավարձի 75 տոկոսի չափով, այսինքն՝ մոտ 400 հազար դրամի չափ ամսական թոշակ կստանան:



Մեր տեղեկություններով, իշխանությունը խուճապի մեջ է այն փաստից, որ քրեածին իրավիճակը երկրում չի բարեկավվում: Հատկապես Աջափնյակի արյունալի միջադեպից հետո քննարկել ու հասկացել են, որ եւս մի նման միջադեպ, եւ ոչ մի հույս չեն կարող ունենալ, որ Երեւանից քվե կստանան, ուստի հանձնարարել են պատկան կառույցներին, եւ հատկապես ներքին գործերի նախարարությունը եռանդով անցել է գործի: Ոստիկանությունից հատ-հատ զանգում են օրինական զենք ունեցողներին, հարցուփորձ անում՝ որտեղ է իրենց զենքը, կիրառո՞ւմ են այն, եւ այլ հարցեր են տալիս: Ի դեպ, նաեւ պարեկային ծառայության աշխատողներն են վերջին օրերին ռեյդեր անում՝ ստուգում են մեքենաների ներսն ու դուրսը, ինչը եւս «զենք գտնելու» օպերացիայի շրջանակներում է իրականացվում: Ներքին գործերի նախարարությունից, ըստ էության, հաստատեցին մեր տեղեկությունը. «Սահմանված կարգով, ոստիկանների պարտականությունն է՝ հաշվառված զենքերի նկատմամբ հսկողության իրականացումը: Դա մշտական աշխատանք է»:

Թատրո՞ն, թե՞ ֆիասկո

Նախընտրական այս փուլում ամեն օր ուզում եմ Համբոյի՝ Գիքորին ուղղված խոսքերն ասել մեր ժողովրդին. Գիքոր ջան, դիմացիր, օրեր են՝ կմթնեն, անց կկենան: Դեռ 100 օր պետք է դիմանաս այս թատրոնին, հոգեբանական տեռորին, աննախադեպ ստերին ու փիառի նորանոր դրսեւորումներին: Մի օր թոշակ ու նպաստ կբարձրացնեն, մյուս օրը սաքսոֆոն կնվագեն ու դհոլ կխփեն, հետո՝ կբաժանվեն ու կամուսնանան, ձի ու հեծանիվ կքշեն, սրտիկ ցույց կտան ու սրտի վիրահատությունների կենթարկվեն... ո՞վ կարող է գուշակել Նիկոլ Փաշինյանի եւ նրա փիառն անողների մտքի թռիչքը, ո՞վ կարող է կանխատեսել, թե հաջորդ կրկեսային համարն ինչպիսին է լինելու: Այնպես որ՝ մեզ ուժ, կարողություն եւ համբերություն, որ դիմանանք այս կրկեսին՝ քվեների համար կենաց-մահու պայքարին: Երեկ ողջ օրը հանրությունը զբաղված էր Փաշինյանի կնոջ հայտարարությունը վերծանելով. զանազան բացատրություններ ու վարկածներ հնչեցին՝ ադեկվատից մինչեւ ամենաֆանտաստիկ: Մարդիկ նկատում էին՝ մի վերջին արժեք, մի ինստիտուտ կար, որին, թվում էր, դեռ հավատարիմ է Փաշինյանը՝ հայկական ընտանիքը, պարզվեց՝ դա էլ չկա: Մարդը հրաժարվել է հայոց պատմությունից, մեր անցյալից, ցեղասպանության խորհրդից, Արցախից, Արարատից, պատերազմ է հայտարարել հայկական եկեղեցուն, նվաստացրել է իրավապահներին ու դատական համակարգը, ոչնչացրել է ժողովրդավարությունը: Մի բան էր միայն պահպանել՝ հավատարմությունն ավանդական ընտանիքին, դա էլ այլեւս չկա: Իսկ չէ՞ որ ամիսներ առաջ կինն ասում էր. «Իմ ամուսինը լեգենդ է»: Հետո հայտարարեց. «Մեր քաղաքացիական ամուսնությունը դադարել է», բայց դրանից օրեր առաջ, նրա ձեռքը բռնած, գնացել էր «Երկրի հակառակ կողմը» գրքի քննարկմանը, իսկ մի քանի օր անց՝ որպես վարչապետի կին, մեկնել էր Տեխաս՝ բուդդաներին այցի:

Պարզվում է՝ դատարանը մտադրություն ունի փոխել նաեւ անցած տարվա հունիսից կալանավորված Բագրատ սրբազանի խափանման միջոցը եւ բանտային կալանքից նրան ուղարկել տնային կալանքի, սակայն սրբազանը համառորեն բնակության հասցե չի տրամադրում դատարանին՝ ընթացակարգով սահմանված կարգով, որպեսզի այդ հասցեում իրեն հաշվառեն ու հսկեն: Բագրատ սրբազանն իրեն անմեղ է համարում եւ կարծում է, որ տնային կալանքի փոխարեն իրեն պետք է արդարացնել, հակառակ դեպքում «ԱԱԾ պադվալում» էլ ինքն իրեն անազատ չի զգում: Ի դեպ, այս հարցի շուրջ նա դատական կարգադրիչների հետ անգամ կատակներ է անում, մեկ ասում է, թե մոռացել է բնակության հասցեն, մեկ՝ թե չունի, եւ այլն:

ՎԵՐՋԻՆ ՇԱՆՍՆ ԵՆ ՏՎԵԼ

Նիկոլ Փաշինյանի թիմում դժգոհ են՝ ինչու Փաշինյանն այս անգամ էլ խնայեց ՆԳ նախարար Արփինե Սարգսյանին, փոխարենը՝ ընտրություններից 3 ամիս առաջ զոհաբերեց 3 փոխոստիկանապետի՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետ Վարդան Վարդանյանին, համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալ, գնդապետ Կարեն Հակոբյանին եւ պարեկային ծառայության պետ, ոստիկանության պետի տեղակալ Արթուր Խուդինյանին: Փոխոստիկանապետերի ազատումը, հիշեցնենք, հաջորդեց Աջափնյակում օրը ցերեկով տեղի ունեցած ողբերգական փոխհրաձգությանը, որի արդյունքում մարդ էր սպանվել: Իշխող թիմում դեռեւս Փարաքարի դեպքերից հետո էին բարձրացրել Արփինե Սարգսյանի պաշտոնանկության հարցը՝ փաստարկելով, որ երկրում իրավական վակխանալիա է, եւ իրենց անվտանգությունն էլ ապահովված չէ, սակայն Նիկոլ Փաշինյանը, ըստ ամենայնի, չի կարողանում Արփինե Սարգսյանին ազատել, քանի որ նա դրսից հովանավորներ ունի, մասնավորապես՝ ԱՄՆ դեսպանությունն է նրան սիրում: Այս անգամ թիմին հասկացրել են, որ վերջին շանսն են տվել նախարարին՝ հաջորդ միջադեպը չի ներվելու: Ի դեպ, համակարգի մեր աղբյուրները փոխանցեցին, որ 3 փոխոստիկանապետերն էլ համարվում են Վահե Ղազարյանի կադրերը. ըստ ամենայնի, Ղազարյանի պաշտոնանկությունից հետո չեն ցանկացել նրան նեղացնել՝ իր կադրերին ազատել, քանի որ իրեն «ճիշտ է պահում» Փաշինյանի հանդեպ: Նրանք արդեն նոր պաշտոն ունեն. երկուսը ՆԳ նախարարի խորհրդական են նշանակվել, Խուդինյանը՝ նախարարի օգնական: Իսկ Կարեն Հակոբյանի փոխարեն պաշտոնակատար է նշանակվել նրա սանիկը՝ Կարեն Խաչատրյանը, որը մինչ այդ Հակոբյանի տեղակալն էր:

ՎԵՂԼԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ Է, ԻՍԿ ՀԾԿՀ-Ն ԱՎԵԼՈՐԴ ԿԱՌՈՒՅՑ Է

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

«Վեոլիա ջուր» ընկերության հայտարարությունը՝ մայիսից մինչեւ սեպտեմբեր 17-ժամյա ջրամատակարարման գրաֆիկի անցնելու մասին, սառը ցնցուղ էր բնակչության համար: Քաղաքացիների բուռն դժգոհության ալիքը՝ ընտրությունից 3 ամիս առաջ, հավանաբար, վախեցրեց ՀՀ կառավարությանը: Գործադիրը կրծքով փակեց ֆրանսիական ընկերությանը:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը փետրվարի 25-ին սոցցանցի իր էջում գրեց, որ ջրամատակարարման ժամանակացույցը «խնդրահարույց է գնահատվել», եւ կառավարությունն օպերատիվ ձեւով հրավիրել է խորհրդակցություն՝ բոլոր շահագրգիռ կառույցների մասնակցությամբ: «Տեղի է ունեցել քննարկում, եւ որոշում է կայացվել՝ կասեցնել ժամանակացույցի գործողությունը»,- նշել է նա: ՏԿԵ նախարարը նաեւ ասել է, որ առաջիկա 2 շաբաթվա ընթացքում Ջրային կոմիտեի, Հանրային ծառայություններ-ը կարգավորող հանձնաժողովի եւ «Վեոլիա ջուր» ընկերության կողմից իրականացվելու են ուսումնասիրություններ, որի արդյունքում կհրապարակվի նախկինի համեմատ ավելի «լավարկված ժամանակացույց»:

«Ցանկացած բանական մարդ, բնականաբար, սա դիտարկում է նախընտրական տրամաբանության շրջանակում ու հասկանում է, որ չեն ցանկացել լարել իրավիճակը, իսկ ի՞նչ է իրականում տեղի ունենալու, վստա՞մ եք արդյոք, որ ձեր լավարկված գրաֆիկը «Վեոլիա ջուր» ընկերությունն իրականացնելու է»,- արդարադատության նախկին նախարար Արփինե Հովհաննիսյանն իր «լայվում» հարցնում է նախարար Խուդաթյանին եւ նրա փոխարեն պատասխանում՝ ոչ, 24-ժամյա ջրամատակարարում չենք ունենալու, որովհետեւ այս ընկերության գործելաոճն է՝ կա՛մ գրվածից քիչ ջուր մատակարարել, կա՛մ ավելի վատ գրաֆիկ հաստատել իրավական ճանապարհով, իսկ մի քանի միլիոնի տուգանքը միլիարդների շահույթ ունեցող ընկերությանը չի վախեցնի: Արփինե Հովհաննիսյանն անցյալ տարվա հոկտեմբերից մոտ 1000 էջ՝ 50-ից ավելի պայմանագրեր է կարդացել, 2018 թ. դեկտեմբերից կնքված, եւ աղաղակող փաստեր է հայտնաբերել, այդ թվում՝ դեպքեր, երբ այս ընկերության պարտքերը Ջրային կոմիտեն վերցրել է իր վրա: «Գնացել եք, ասել, թե պետությունը ներդրում չի անում, պետությունն էլ հավատացել է, որովհետեւ վերահսկողություն չկա»,- ասում է Արփինեն իր «լայվում»: Ասում են՝ այդ պայմանագրերում անգամ կա դեպք, երբ վատ կառավարման համար աուդիտորը տուգանել է ֆրանսիական ընկերությանը, իսկ Ջրային կոմիտեն, փաստացի՝ ՏԿԵ նախարարությունը, նրա փոխարեն մուծել է տուգանքը, որպեսզի «Վեոլիայի» միջազգային ռեյտինգը չտուժի:

Այլ կերպ ասած՝ ֆրանսիական ընկերությունը Հայաստանում արել ու անում է այն, ինչ կամեցել է, բայց ո՛չ նախարարությունը, ո՛չ Ջրային կոմիտեն, ո՛չ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը չի վերահսկում այս կառույցի գործունեությունը: «Յուրաքանչյուր տարի «Վեոլիա ջուր»-ը մինչեւ սեպտեմբերի 1-ը ջրամատակարարման գրաֆիկն ուղարկում է ՀԾԿՀ, եւ այնտեղ, բնականաբար, որեւէ պահանջ չեն ներկայացնում, ասում են՝ եղավ, եւ հաստատում են»,- ասում է Արփինե Հովհաննիսյանը, եւ նրա «լայվը» 2 մլն-ից ավելի դիտումներ է հավաքում:

«Վեոլիա ջուր» ընկերությունից, ի պատասխան «Հրապարակին», արդարանում են: «Մենք գրաֆիկներ չենք հաստատում: Մինչեւ 24 թիվը մեր հանձնաժողովը համաձայնություն էր տալիս: 2024 թվականից այդ կետն ուժը կորցրած է ճանաչվել, եւ հիմա դա մեր մասով դուրս է եկել»,- «Հրապարակի» հետ զրույցում ասում է Հանձնաժողովի խոսնակ **Լիանա Ազիզյանը**: Ըստ խոսնակի, ՀԾԿՀ-ն ոչ թե հաստատում է, այլ՝ իրազեկում: Բայց արդարացումները չեն փրկում Հանձնաժողովին: Բանն այն է, որ նախկինում էլ՝ մինչեւ 2024 թվականը, երբ ջրամատակարարման ժամանակացույցը համաձայնեցվում էր ՀԾԿՀ-ի հետ, եղել են դեպքեր, երբ հանձնաժողով են ներկայացվել, ասենք, 18-ժամյա գրաֆիկներ, եւ Հանձնաժողովը դեմ չի եղել:

Այսինքն, իրենք կուզեն՝ ընդամենը 5 ժամ ջուր կտան, ու դուք ոչինչ չե՞ք անի՝ հարցնում ենք ՀԾԿՀ խոսնակին: «Ոչ: Նվազագույն պահանջը, որը նախատեսված է ջրամատակարարման եւ ջրօգտագործման կանոններով, 6 ժամ է, բայց, ըստ պայմանագրի, «Վեոլիա ջուր» ընկերությունը պետք է ջրամատակարարման շարունակական կատարելագործում իրականացնի: Այսինքն՝ ընկերությունը 6 ժամից պակաս իրավունք չունի ջրամատակարարում իրականացնել»,- պատասխանում է ՀԾԿՀ խոսնակը: Իսկ եթե ընկերությունը 6 ժամից քիչ ջուր մատակարարի, այդ դեպքում Հանձնաժողովը կարող է տույժ-տուգանք կիրառել, դա Արփինե Հովհաննիսյանի նշած «մի քանի կոպեկ» տուգանքն է, որը ֆրանսիական ընկերության համար ոչինչ է:

Թե որն է նման կառույցի դերն այս դեպքում, հասկանալի չէ: Այս հարցին խոսնակը պատասխանում է. «Կանոններով նախատեսված է, որ «Վեոլիա ջուր» ընկերությունը պետք է ամեն տարի գրաֆիկները բաժանորդներին ներկայացնի, ծանուցի, կայքում հրապարակի: Հիմա ընկերությունը հերթական անգամ հրապարակել է, մեծ դժգոհություն առաջացավ, եւ կառավարությունը կասեցրեց դա: Նշված է, որ երկշաբթյա ժամկետում նոր գրաֆիկներ կսահմանվեն, եւ ճիշտ կլինի սպասենք, որ այդ երկշաբթյա գրաֆիկը լրանա»:

Նկատենք, որ ֆրանսիական ընկերությունը ոչինչ չի ասել 17-ժամյա գրաֆիկը չեղարկելու մասին: Ընկերությունը «քննարկում» է նոր գրաֆիկ, ոչ թե արդեն հրապարակվածի չեղարկում: Եթե Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ 2024 թվականից այլեւս չեն համաձայնեցվում ջրամատակարարման ժամանակացույցները, եւ այն ընդամենը իրազեկվում է հանրությանը, ապա ինչպե՞ս է իրականացնելու սպառողների շահերը պաշտպանելու իր գործառույթը:

Հարցն ուղղեցինք Արփինե Հովհաննիսյանին: «Իսկապես, 2024 թվականից համաձայնեցման պրոցեսը վերափոխվել է իրազեկման գործառույթի, բայց նախ պնդենք, որ մինչ այդ «Վեոլիա ջուրը» սպառողների շահերը ոտնահարող գրաֆիկը համաձայնեցրել է ՀԾԿՀ-ի հետ: Սա պատմություն չէ անձերի մասին, սա պատմություն է սպառողների շահերի համակարգային ոտնահարման մասին: Հետեւաբար, մինչեւ 2024 թվականի փոփոխությունը, համաձայնեցման համար պատասխանատվությունը եւ բազմաթիվ համայնքներում 17-ժամյա գրաֆիկին լռելյայն համաձայնելու, մարզերում էլ՝ 6, 8 ժամ գրաֆիկներին համաձայնելու պատասխանատվությունը կրում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Ինչ վերաբերում է դրանից հետո կատարված փոփոխությանը, այո, ՀԾԿՀ-ն, եւ ես դա նշել եմ իմ տեսանյութում, ոչ մի իրավասություն չունի, եւ եթե սպառողի շահի ոտնահարման խնդիր ենք բարձրացնում, պետք է գնանք այլ հասցեատիրոջ մոտ, որը, իմ համոզմամբ, Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովն է: Պարզապես այստեղ ուրիշ հարց է ծագում՝ այդ դեպքում ո՞րն է, առհասարակ, ՀԾԿՀ առաքելությունը»:

Ի դեպ, հիշեցնենք. այսօր էլ մարզեր կան, որտեղ 6-8 ժամ է ջուր տրվում կամ դրանից էլ քիչ: Անգամ չեղարկված 17-ժամյա ջրամատակարարումն այդ մարզերի ու գյուղերի համար պարզապես երազանք է:

ՓԱՇԻՆՅԱՆԸ 8 ՏԱՐՈՒՄ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ 3 ՂԵԿԱՎԱՐ Է ՓՈԽԵԼ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Հակոբ Բադալյանն** է:

- Ընտրություններին ընդառաջ, իշխանությունն անսպասելի քայլերի է գնում, անգամ իշխանական ընտանիքն է լծվել դրան: Ամեն ինչ անում են՝ ձիու հետ համբուրվելուց մինչեւ թոշակների բարձրացում, Աննա Հակոբյան-Նիկոլ Փաշինյան ամուսնալուծության մասին հայտարարություն եւ այլն: Բայց ո՞ւմ է հետաքրքրում նրանց ինտիմ կյանքը, առհասարակ՝ նախընտրական շրջանում նման պրոցեսներն ի՞նչ ազդեցություն կարող են թողնել:

- Նախ պետք է հասկանալ՝ այս ամենը մտածված տեխնոլոգիա՞ է, ինչ-որ քարոզչական նպատակներով ծրագրվա՞ծ մի բան, թե՞ պարզապես նախընտրական պրոցեսին զուգահեռ ընտանեկան հարաբերությունների հանգուցալուծում: Քանի որ մենք չունենք վստահություն, թե ինչի հետ գործ ունենք, կարող ենք բացառապես ենթադրություններ անել: Եթե այս ամենը տեխնոլոգիա է, ապա թերեւս պետք է սպասել հետագա ծավալումներին: Ավելի ճշգրիտ եւ ամբողջական պատկերացում կազմելու համար, պետք է սպասել, թե ինչ կլինի հետագայում, ինչպիսի զարգացում կունենա այս «դրամատուրգիան»: Անկախ ամեն ինչից, այս պրոցեսն ունի իր հանրային ազդեցությունը, ինչու, որովհետեւ խոսքը երկրի առաջին դեմքերին է վերաբերում: Ինչպես վարչապետի, այնպես էլ նրա կնոջ գործունեությունը՝ իրենց իսկ կամքով, եղել է չափազանց հանրային, այդ իմաստով կասկած չունեմ, որ նման զարգացումները թողնելու են հստակ ազդեցություն թե՛ հասարակության շրջանում, թե՛ նաեւ ներիշխանական մթնոլորտի վրա: Գաղտնիք չէ, որ իշխանության ներսում այս տարիներին Աննա Հակոբյանը ձեւավորել է իր շրջանակը, հետեւաբար, եթե նման փոփոխություններ են տեղի ունենում, ապա դրանք անպայման թողնելու են իրենց ազդեցությունը:

- Թոշակները բարձրացնում են մինչեւ 10 հազար դրամով, դրան զուգահեռ հայտարարում են, որ 70 մլն եվրո վարկ են վերցնում, որպեսզի ջրի խնդիրը լուծեն, քանի որ հանրությունը խիստ վրդովված է այն փաստից, որ կարող է ջրամատակարարումից օգտվել 17 ժամ՝ նախկին 24-ի փոխարեն: Անզեն աչքով երեւում է, որ այս պրոցեսները եւս նախընտրական տրամաբանության մեջ են: Ըստ Ձեզ՝ ի՞նչ քայլեր են սրանք եւ ի՞նչ ազդեցություն կարող են թողնել հասարակության վրա:

- Սրանք Հայաստանի համար ավանդական տեխնոլոգիաներ են, որոնք կիրառվել են բոլոր ժամանակներում՝ այս կամ այն չափով: Սա վարչական ռեսուրսի կիրառման մի տարբերակ է, որն իշխանությունն օգտագործում է՝ սոցիալական, պոպուլիստական նպատակներից ելնելով: Ինչ վերաբերում է «Վեոլիա ջուր» ընկերությանը, մենք կա՛մ գործ ունենք կառավարման բարձիթողի եւ անվերահսկելի իրավիճակի հետ, կա՛մ էլ այդ հայտարարությունը համաձայնեցված էր իշխանությունների հետ, որպեսզի կառավարությունն անմիջապես հետո արձագանքի դրան եւ «հերոսաբար» հանգուցալուծի հարցը: Եթե հունիսի 7-ից հետո այս իշխանությունները չհեռանան, ի՞նչ է լինելու նույն ջրամատակարարման հարցը, թոշակների հարցը եւ այլն: Քայլեր են արվում հայտարարության տեսքով, սակայն մենք գործ ունենք համակարգային ճգնաժամերի հետ, եւ հարց է, թե հետագայում ինչ կարող է լինել: Փաշինյանն իր պաշտոնավարման շրջանում հասցրել է Ջրային կոմիտեի 3 ղեկավար փոխել, ինչը փաստում է այն մասին, որ առկա է կառավարման քաղաքական խնդիր, այլ ոչ թե կոնկրետ միայն ինչ-որ մի պաշտոնյայի:

Ինչում են մեղադրում տիկին Ռուզաննային

Աժ պատգամավոր Սեյրան Օհանյանի կինը՝ Ռուզաննա Խաչատրյանը, որը Ֆեյսբուքում բավականին ակտիվ է, շարունակում է լուսանկարներ հրապարակել: Վերջիններից մեկն ավել է Փարիզի մի սրճարանում, սակայն այն թերեւս հին է, որովհետեւ Խաչատրյանն այժմ մեղադրյալի կարգավիճակ ունի, եւ նրա նկատմամբ կիրառված է բացակայելու արգելք խափանման միջոցը: Պարզ է, որ ֆոտոսեսիաների սիրահար տիկին Խաչատրյանն արխիվային լուսանկարներ է հրապարակում, երեւի որպեսզի ցույց տա՝ ոչ մի քրեական գործ չի կարող ընկճել ու տխրեցնել իրեն:

Իսկ ինչում է մեղադրվում Ռուզաննա Խաչատրյանը: Մեղադրական եզրակացության մեջ նշված է. «Ռուզաննա Գուրգենի Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021 թ. դեկտեմբերի 13-ից 2022 թվականի հունիսի 23-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել եւ ղեկավարել է Աննա Բադալյանի եւ Կարինե Մարգարյանի կողմից քաղաքացիական գործով ապացույցներ կեղծելը, կազմակերպել եւ ղեկավարել է Աննա Բադալյանի կողմից քաղաքացիական գործով արգելանքի տակ գտնվող գույքերի նկատմամբ ապօրինի գործողությունների կատարումը, որը դրսեւորվել է այդ գույքերն ապօրինի օտարելով, ինչպես նաեւ՝ 2022 թվականից մինչեւ 2024 թվականն ընկած ժամանակահատվածում հանդիսանալով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, իր կողմից ներկայացված հայտարարագրերում թաքցրել է հայտարարագրման ենթակա թվով 2 անշարժ գույքերի վերաբերյալ տվյալները, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքերի չհայտարարագրմանը»: Այս գործով մյուս մեղադրյալը Ռ. Խաչատրյանի քրոջ դուստրն է: Գործն արդեն Հակակոռուպցիոն դատարանում է, մակագրվել է դատավոր Արամ Գրիգորյանին:

Խաչատրյանի պաշտպան **Հայկ Ալումյանը** չմանրամասնեց գործի մասին, ասաց՝ անհիմն է, դրանում կհամոզվենք դատարանում. «Վերջերս դուք չեք նկատել, որ կան որոշ կատեգորիայի գործեր եւ որոշ կատեգորիայի մարդիկ, որոնց նկատմամբ մեղադրանք առաջադրելու համար պարտադիր չէ, որ ապացույցներ լինեն: Գումարեք նաեւ Ռուզաննա Խաչատրյանին: Սա վերջերս այնքան էլ հազվադեպ չի պատահում, կգաք դատարան, կտեսնեք, թե ինչից է բաղկացած այս գործը»: Իսկ Ռուզաննա Խաչատրյանը կարծում է, որ մեղադրանքը քաղաքական էլեմենտնե՞ր է պարունակում: «Համոզված է, ես էլ կարծում եմ՝ իր համոզմունքը բավականին հիմնավոր է»: Հայկ Ալումյանը հաստատեց՝ Ռուզաննա Խաչատրյանը երկրում է գտնվում:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

2021-Ի ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ՁԱԽՈՂԵԼ Է, ԵԿԵԼ Է 2026-Ի ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

ՍՎԵՏԼԱՆԱ

Հանուն քվեի, հանուն իշխանությունը պահելու, Նիկոլ Փաշինյանը պատրաստ է ամենաանհավանական, խելացնոր քայլերի, պատրաստ է անգամ իր ընտանիքը «զոհաբերել», անձնական կյանքը դարձնել հանրային քննարկման առարկա, ամեն ինչ դնել զոհասեղանին, միայն թե վերընտրվի եւ մնա վարչապետի պաշտոնին:

Թոշակներն ու նպաստները, մանկապարտեզների դաստիարակների աշխատավարձերը բարձրացնելու, ջրամատակարարման գրաֆիկը պահպանելու, հայտարարագրման գումարների չափը մեծացնելու եւ այլ որոշումներ, ինչպես նաեւ՝ առաջիկայում վստահաբար տրվելիք բազում խոստումներ դրան են ուղղված: Ինչպես դրան են ուղղված Եկեղեցու դեմ արշավում հայտարարված հրադադարը, Վարչաբենդի ձեւավորումը, ներկուսակցական փրայմերիզների անցկացումը, կադրային տեղաշարժերը եւ այլն, որոնք քաղաքական տեխնոլոգիաների զինանոցից են: Այդ զինանոցից են նաեւ այն վերամբարձ հայտարարությունները, թե՝ եթե մենք չլինենք, խաղաղություն չի լինի, մենք չընտրվենք՝ Թրամփի ուղին չի կառուցվի:

Երեկ էլ նախընտրական այս թատրոնը համալրվեց եւս մեկով՝ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը հայտարարեց ամուսնուց բաժանվելու, կառավարական ամառանոցից հեռանալու եւ վարձով ապրելու մասին: Մի սրտաճմլիկ տեքստ էր պատրաստել, թե ինչ զրկանքներով ու զսպվածությամբ է այս տարիներին ապրել, որ մինչեւ անգամ հագուստի փող չի ունեցել, դիզայներների հագուստները «պռակատ» է վերցրել՝ հագել, ներկայացել պետական որեւէ արարողության, ապա վերադարձրել տերերին: Խեղճի, չքավորի իմիջ ստեղծող զույգը, հավանաբար, հույս ունի, որ ընտրողը կկարեկցի իրենց, կարժեւորի վարչապետին, որ պետական բյուջեն կնոջ վրա չի վատնել, ու մի քանի ավել քվե կստանան: Կամ էլ սրանով կհերքեն կոռուպցիայի մասին խոսակցությունները, «Իմ քայլը» հիմնադրամի վճարովի ընթրիքների թողած բացասական տպավորությունը:

Ի դեպ, ՔՊ կուլիսներում երեկ քննարկում էին, որ այս թատրոնի գաղափարը հենց Փաշինյանինն է, նա հասկանում է, որ իր կինը բարձր հակառեյտինգ ունի, որ հայկական իրականությունում նա հասցրել է «Սաշիկ 2» դառնալ, ուստի առաջարկել է Աննա Հակոբյանին՝ պաշտոնապես հեռանալ իր կյանքից. գուցե այդ հեռացումը՝ թեկուզ չնչին, բայց օգնի իրենց համատեղ գործին՝ իր վերարտադրությանը:

Փաշինյանը, հավանաբար, մտածում է՝ ընտրողը մոռացել է 2021 թվականի իր ու իր խմբակի խոստումները եւ հույս ունի, որ այս անգամ էլ, մոլորեցնելով ընտրողին, կարող է երրորդ ժամկետում վերարտադրվել:

Իսկ ի՞նչ էր նա խոստանում հինգ տարի առաջ՝ 2021-ի հունիսի 20-ի ընտրությունների նախօրեին: ՔՊ-ն իր նախընտրական ծրագրում ամենաշռայլ խոստումները տալիս էր Արցախի մասով՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացում, Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորում, Շուշիի եւ Հադրութի դեօկուպացիա, Արցախի հայերի իրավունքների ապահովմամբ՝ հակամարտության կարգավորում: Մինչ այդ էլ, երբ ողջ երկիրը նրա հրաժարականն էր պահանջում, սրտաճմլիկ ելույթներ էր ունենում՝ իրավիճակը փոխելու 6-ամսյա ժամանակ էր խնդրում եւ ճանապարհային քարտեզ հրապարակում: Խոստանում էր Արցախի բանակցային գործընթացը վերականգնել՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձեւաչափով, եւ գերի ընկած անձանց շուտափույթ վերադարձնել, անհետ կորածների հարցը լուծել:

«Գերիները մեզ կներեն՝ մի ամիս, երկու ամիս ավել գերության մեջ մնալու համար»,- քարոզարշավին անամոթաբար հայտարարում էր Փաշինյանը: Այդ 1-2 ամիսն արդեն 5 եւ ավելի տարի է դարձել, որոնց գումարվել են նաեւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները, որոնք արդեն 2.5 տարի է՝ խոշտանգվում են Բաքվում: Խոստանում էր խաղաղության պայմանագիր կնքել, բայց այն ընդամենը նախաստորագրվել է, Ադրբեջանի նախագահն էլ շարունակ տնային առաջադրանքներ է տալիս Փաշինյանին՝ Սահմանադրությունը փոխել, Հռչակագրից ազատվել, միջազգային հայցերից հրաժարվել եւ այլն:

Փաշինյանի թիմի՝ սոցիալական ոլորտում տված խոստումներն էլ են մնացել թղթի վրա: «Գործազրկությունն իջեցնել 10%-ից ցածր: Աղքատության մակարդակը նվազեցնել կրկնակի: Կենսաթոշակի միջին չափը 43 հազար 500 դրամից դարձնել 61 հազար դրամ: Նվազագույն կենսաթոշակը 26 հազար 500 դրամից դարձնել 37 հազար դրամ: Նվազագույն աշխատավարձը 68 հազար դրամից դարձնել առնվազն 85 հազար դրամ»,- 2021-ի նախընտրական ծրագրում խոստանում էր Փաշինյանը: Տեսնենք, թե ինչ պատկեր է այժմ՝ պաշտոնական թվերով: Վիճակագրական կոմիտեի հրապարակած տեղեկատվության համաձայն՝ 2025-ի 3-րդ եռամսյակի տվյալներով, գործազրկության մակարդակը կազմել է 11,8%: Կենսաթոշակի միջին չափը՝ խոստացված 61 հազարի փոխարեն, կազմում է 49 հազար 32 դրամ: Նվազագույն կենսաթոշակի չափը միայն 5 տարի անց, այն էլ՝ ճարահատյալ, բարձրացրել են. ապրիլի 1-ից՝ ընտրություններից 2 ամիս առաջ, մարդիկ 10 հազար ավելի կստանան: Չի կատարվել նաեւ նվազագույն աշխատավարձի չափին վերաբերող խոստումը: Այժմ նվազագույն աշխատավարձը 75 հազար դրամ է:

Այնպես որ, 2026-ի ընտրություններից առաջ հնչած մեծամեծ խոստումներն էլ նույն ճակատագրին են արժանանալու, եթե մի հրաշքով ՔՊ-ն վերարտադրվի: Բայց իրականություն են դառնալու Ալիեւի «Արեւմտյան Ադրբեջան» եզրույթի, 300 հազար ադրբեջանցիների՝ Հայաստանում բնակվելու, Տիգրանաշենը վերցնելու եւ Զանգեզուրի միջանցքը ստանալու մասին խոստումները:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԸՆՏԱՆԻՔԻ ՔԱՆԴՎԵԼՆ ԱՎԵԼԻ ՑԱՎԱԼԻ Է, ՔԱՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՀԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի կինը հայտարարել է իրենց քաղաքացիական ամուսնալուծության մասին: «Ես նշել էի քաղաքացիական ամուսնությունը, որովհետեւ այլ ամուսնություն չունենք, այսօր ես լքում եմ կառավարական առանձնատունը»,- ասել է Աննա Հակոբյանը: Նիկոլ Փաշինյանը Ֆեյսբուքում արձագանքեց կնոջը. «Վերջին 30 տարում իմ բոլոր դժվարին օրերին նա եղել է իմ կողքին, եղել է իմ ապավենն ու հենարանը: Վստահ չեմ, թե ես նրա համար եղել եմ այդպիսին: Թերեւս ավելի շատ դառնություն եմ պատճառել, ինչի համար ներողություն եմ խնդրում»: «Իմ բոլոր ընկերներին, ծանոթ-անծանոթներին, հեռու-մոտիկ բարեկամներին եւ անգամ ամենահարազատ մարդկանց տեղյակ եմ պահում, որ այս թեման ինձ հետ քննարկման ենթակա չէ: Ես արգելք եմ դնում դրա վրա: Ձեզ էլ, սիրելի՛ ժողովուրդ, հորդորում եմ շատ ժամանակ չծախսել այս հարցը «դնել-վերցնելու» վրա. պարապ զբաղմունք կդառնա՝ անօգուտ եւ անպտուղ: Լսեցինք, արձանագրեցինք, անցանք առաջ»,- Ֆեյսբուքում ապրող, ամուսնացող ու բաժանվող բազմազավակ ընտանիքի մայրն է հայտարարել:

Ինչո՞ւ է իշխանական ընտանիքն այդքան սիրում խոսել իր անձնական կյանքից, կենցաղից: Շատերն են բաժանվում, նորից ամուսնանում, հիասթափվում, վիճում, սիրահարվում, ճաշ պատրաստում, գիրք կարդում, բուի ընդունվում, նվագել ու հեծանիվ վարել սովորում, ճամփորդում, բայց այդ ամենը հանրային քննարկման առարկա չեն դարձնում եւ զոհի կերպարով չեն փորձում խղճահարություն առաջացնել, քվե կորզել, սեր ու հարգանք պարտադրել: Ինչո՞ւ է իշխանական այս զույգն ամեն գնով փորձում ուշադրության կենտրոնում հայտնվել, եւ ինչո՞ւ չկարողացան գոնե հայ ավանդական ընտանիքի կերպարը պահպանել՝ որպես ազգային արժեք ու ավանդույթ:

Տեր Վրթանես քահանա Բաղալյանին հարցրինք՝ ինչպիսի՞ն պետք է լինի ավանդական ընտանիքի մոդելը եւ ինչի՞ց պետք է զերծ մնա: Քահանան ասաց. «Անկեղծ ասած, շատ ցավում եմ նրանց համար: Վատ է, երբ նման բաների մասին խոսում են, ծավալվում են, այն կարող է իրենցով հիացած զանգվածի համար առիթ դառնա՝ նույն բանը կրկնելու: Ցավում եմ, որ նման բան է եղել, ցանկացած ընտանիքի փլուզում ինձ համար ավելի ողբերգական է, քան որ ասում են՝ մարդ է մահացել: Ընտանիքը մեր երկրի հիմնական ու կարեւոր օղակն է, եւ դրա քանդումը ցավալի է: Պաշտոնյաների վարքագիծը, ինչպես որ հոգեւորականների վարքագիծը, պետք է տարբերվի շարքային քաղաքացիների վարքագծից: Ես՝ ինքս, ունեմ չորս երեխա, կին, իմ ընտանիքին, կնոջս հավատարիմ եմ, երջանիկ եմ իմ ընտանիքում եւ նույն բանը ցանկանում եմ բոլորին: Մենք պետք է շատերի համար լինենք օրինակ»:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՄԱՀԱԲԵՐ Է ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵԾ

Փետրվարի 26-ին հրազենի գործադրմամբ սպանված 19-ամյա զինծառայող Նարեկ Հակոբյանը ծնունդով Աբովյան համայնքից էր, ծառայում էր Վարդենիս քաղաքի զորամասում եւ մի քանի ամսից՝ ամռանը, տուն էր գալու: Քննչական կոմիտեն միանգամից չի կողմնորոշվել, թե որ հոդվածով հարուցի վարույթը: Դեպքը, ըստ տարաբերությունների, թե՞ բանակում տիրող գողական բարքերը: Երեկ առավոտյան նոր տեղեկություն տարածվեց՝ Նարեկ Հակոբյանին սպանել են, կասկածյալը հայտնաբերվել է: Քննչական կոմիտեն երկու նախադասություն է գրել. «Փետրվարի 26-ին հայտնաբերված զինծառայողի մահվան դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննության ընթացքում 1 անձ ձերբակալվել է»:

«Հրապարակին» հայտնի են դարձել որոշ մանրամասներ: Պարզվում է՝ Նարեկ Հակոբյանի հետ կապված սա երկրորդ միջադեպն է եղել զորամասում: Նրան երկար ճնշել են, ստիպել են խոհանոցում աշխատել: Օրեր առաջ էլ փորձել են նրա հետ հաշվեհարդար տեսնել, սակայն ինչ-ինչ պատճառներով չի ստացվել: Ասում են՝ զինծառայողը մենակ չի եղել. երկրորդ անգամ մենակ է եղել, եւ հանցագործները կարողացել են գործը գլուխ բերել: Այս տեղեկությունը ստացել ենք երիտասարդի հարեւաններից: Ըստ այլ աղբյուրի էլ՝ զորամասում տղաների միջեւ թեժ վեճ է տեղի ունեցել, որից հետո կրակոցներ են եղել, եւ զինծառայողը մահացել է: Քննչական կոմիտեն հրաժարվեց ճշտել մեր ստացած տեղեկությունները՝ հաղորդելով, որ ոչինչ չեն կարող ավելացնել եւ մանրամասներ կհայտնեն քրեական հետապնդում հայտարարելուց եւ խափանման միջոց սահմանելուց հետո:

Եթե մեր ստացած տեղեկությունները ճիշտ են, եւ սպանությունը նախապես փորձարկվել է, ապա սա նշանակում է, որ զորամասում չկա կարգապահություն եւ հրամանատարների հսկողություն, դաստիարակչական աշխատանքը զրո է, զորամասում փողոցային վարքուբարք է տիրում: Սա արդեն այս տարի բանակում տեղի ունեցած 3-րդ մահվան դեպքն է: 3-ն էլ տեղի են ունեցել փետրվարին: Քննչական կոմիտեն քննում-քննում է, բայց ոչինչ չի հրապարակում: Գործերի քննության ընթացքը լռության է մատնվում: Ճշմարտությունը հանրությանն այդպես էլ չի մատուցվում: Մահացող տղաներն այն տանում են իրենց հետ:

Առաջին զոհը տավուշցի զինծառայող Դավիթ Մանուկյանն էր: Տղայի դին հայտնաբերել էին փետրվարի 7-ին: Դավիթը 22 տարեկան էր, Բագրատաշեն գյուղից, ծառայում էր «Պաշտպան հայրենյաց» ծրագրով: Դեպքի վերաբերյալ մինչ օրս ոչ մի տեղեկություն պաշտոնապես չեն հայտնել:

Երկրորդ դեպքը տեղի էր ունեցել փետրվարի 17-ին: Սպանվածը 19-ամյա հրազդանցի զինծառայող Սեւակ Հովհաննիսյանն էր: Նախնական վարկած եղավ, թե տղան ինքնասպան է եղել, ինչպես միշտ, երբ նման դեպքերում իրավապահները փորձում են սպանությունը ներկայացնել որպես ինքնասպանություն: Սակայն մամուլում տեղեկություններ հայտնվեցին, որ Սեւակ Հովհաննիսյանը եղել է հերթապահ եւ առավոտյան զինվորներին արթնացրել է, ու այդ հանգամանքը այնքան էլ դուր չի եկել որոշ զինծառայողների, եւ հնչել է արտահայտություն՝ դու մեզ չես կարող հանել քնից, ինչից էլ սկսվել է վեճը: Այս մասին գրել էր ArmLur.am-ը:

Փաստորեն, վեճերին զենքով հանգուցալուծում տալը մեր բանակում սովորական երեւույթ է դարձել:

Եթե այս տեմպը շարունակվի, ապա կարող ենք արձանագրել, որ բանակում մահացության մակարդակը շարունակում է բարձր մնալ: 2025 թվականին ՀՀ զինված ուժերում արձանագրվել է մահվան 40 դեպք, որից 36-ը գրանցվել է ոչ մարտական պայմաններում: 4 զինվոր հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով է զոհվել: Հայկական բանակը մահաբեր է դառնում տղաների համար:

«Ամբողջ օրը թմբկահարում են չեղած խաղաղությունից կամ սահմանում զոհեր չունենալու իրողությունից, իսկ թե ինչ է կատարվում բանակի ներսում, չեն խոսում: Չեն խոսում, թե ինչու խաղաղություն չկա բանակի ներսում, թե ինչու են մեր զինվորները մեկը մյուսին սպանում: Մահվան այս դեպքերը վկայում են, թե ինչպիսի մթնոլորտ է բանակում, ինչպիսին է վերահսկողությունը եւ պատասխանատվությունը զինվորի կյանքի նկատմամբ: Ոչ մի բացատրություն ընտանիքներին, թե ինչու են նրանց որդիները կյանքից զրկվում: Պապիկյանի գործն ընդամենը տարվա վերջին ասուլիսով հանդես գալն ու ասելն է. «Կարգապահության բարձրացման ուղղությամբ էական աշխատանքներ են կատարվել այս տարիների ընթացքում, եւ ես պիտի կարեւորեմ 2025 թվականը, որովհետեւ 2025 թվականին մենք ունենք շոշափելի արդյունքներ»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՊԵՏՔ Է ԲԱԺԱՆՄԱՆ ՊՐԻՄԻՏԻՎ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԻՑ ՀԵՌՈՒ ՄՆԱՆՔ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԸ ԶԳԱՆՔ

Ինչ Նիկոլ Փաշինյանն ու իր «խաղաղասեր» թիմն օրնիբուն խաղաղության մասին են ճամարտակում, Բաքվի բռնապետ Ալիեւն Արցախի Մարտունի քաղաքում հայտարարել է. «...Վստահ եմ, որ ամբողջ ադրբեջանական ժողովուրդը, այդ թվում՝ դուք, միշտ հավատացել եք, որ այս օրը կգա, եւ մենք կազատագրենք այդ հողերը, կվերականգնենք արդարությունը եւ թշնամուն կվտարենք մեր հողերից: Ինչպես գիտեք, չնայած նախկինում օկուպացված հողերի մեծ մասն ազատագրվել է Հայրենական պատերազմի ժամանակ՝ հինգ տարի առաջ, Խոջավենդը դեռեւս օկուպացիայի տակ էր, եւ Խոջավենդի ժողովուրդը նույնպես հավատում էր, որ իրավիճակը մի օր կփոխվի: Վստահ եմ, որ հասարակության մեջ կար այն համոզմունքը, որ թշնամու ոտքերի տակ ոչ մի թիզ հող չի մնա, եւ մենք դրան հասել ենք: Ավելի քան երկու տարի է, ինչ մենք վերահսկում ենք ամբողջ տարածքը՝ ադրբեջանական պետության ինքնիշխան տարածքը: Մենք ոչնչացրել ենք թշնամու վերջին բույնը, վտարել ենք անջատողականներին, ստիպել նրանց՝ պատասխան տալ դատարանում, եւ լիովին վերականգնել ենք արդարությունը: Հետեւաբար, այդ դժվարին ժամանակաշրջանը մեր ետեւում է, մեր ետեւում է եւ երբեք չի վերադառնա: Այսօր մեր պետությունն ուժեղ է, մեր բանակն ուժեղ է, եւ մեր ժողովուրդն այս տարիների ընթացքում արդեն ցույց է տվել իր մեծությունը ամբողջ աշխարհին: Վերջին 80 տարիների ընթացքում չի եղել երկրորդ երկիր, որը տարել է այնպիսի լիակատար եւ բացարձակ հաղթանակ, ինչպիսին Ադրբեջանը...»:

Ռազմական փորձագետ, հասարակական գործիչ **Դավիթ Զամալյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Ալիեւի հայտարարությունների եւ Թրիփի երթուղու միջոցով խաղաղության հասնելու Փաշինյանի կեղծ օրակարգի մասին, ասում է. «Թուրքի թշնամանքը հայի նկատմամբ ունի քաղաքակրթական խորքային արմատներ: Թուրքի հետ հարեւանություն անել հնարավո՞ր է, թե՞ ոչ, այն շատ լուրջ էթնոլոգիական, էթնոհոգեբանական վերլուծությունների առարկա է եղել՝ մինչեւ սրանց՝ իշխանության գալը: Ինչպես ուզում ես խնդրին մոտեցիր, որ կողմից ուզում ես, միայն մեկ դեպքում է հնարավոր թուրքի հետ խաղաղ հարեւանություն անել, երբ դու ուժեղ ես, երբ քեզնից կա վախ, երբ վստահ են, որ հարվածին պատասխանելու ես հարվածով, ագրեսիային՝ ագրեսիայով: Միայն այս դեպքերում է հնարավոր ինչ-ինչ կոնտակտներ ստեղծել՝ առեւտուր եւ այլն: Խնդրին հետեւող ցանկացած մասնագետ գիտի, որ թուրքերի թշնամանքը մեր հանդեպ ունի մշակութային ակունքներ, խոր քաղաքակրթական արմատներ, այն փոխանցվել է սերնդեսերունդ: Անգամ եթե նրանց ասացվածքներն ուսումնասիրենք, կտեսնենք, թե որքան մեծ է ատելությունը հայերի հանդեպ: Կեղծավորություն գուցե լինի, բայց երբեք՝ ոչ իրական բարեկամություն: Մենք էլ ասում ենք՝ շատ բարի, բայց դա հնարավոր է միայն ուժեղ հայի հանդեպ, թույլին անգամ չեն կեղծավորում: Մենք պետք է լինենք ուժեղ: Բոլոր ազգերը, այդ թվում՝ թուրքերն ու ադրբեջանցի թուրքերը, ունեն գոյության իրավունք, ուղղակի ո՛չ մեր հաշվին, ո՛չ մեր կենսական տարածքների եւ մեր հողերի: Ինչ վերաբերում է Թրիփին, այն Զանգեզուրի միջանցքն է, անունը փոխած: Ինչո՞ւ է այն միջանցք, որովհետեւ անխոչընդոտ, առանց որեւէ վերահսկողության, ադրբեջանցիներն օկուպացված Արցախի տարածքից մտնելու են օկուպացված Նախիջեւանի տարածք: Եթե ընթացքն անխոչընդոտ է, ուրեմն միջանցք է՝ վերջ, ուզում է Նիկոլ Փաշինյանն իր կաշվից էլ դուրս գա, դրանից բան չի փոխվելու: Միջանցքը չի բերելու երբեք խաղաղության: Թուրքերն ունեն ծավալապաշտական նկրտումներ եւ երբեք էլ այն չեն թաքցրել: Հայերը մեծ վտանգ են նրանց համար: Մենք մեր գոյությամբ խանգարում ենք թուրքերին եւ անգլոսաքսոնական ուժերին: Նրանք մեզ մեծահոգաբար չեն հանդուրժելու, պոկելու են ամեն ինչ, եւ այդ ամենը հանգեցնելու է թրքացման, ուստի կամ պատերազմ է սկսվելու, եւ նորից կապիտուլյացիա է ստորագրվելու, կամ թուրքերին բերելու են՝ Հայաստանը հեղեղեն թուրքերով: Նիկոլի խաղաղության հեռանկարը թրքացման հեռանկարն է: Ցանկացած խելամիտ մարդ ամեն բան հասկանում է: Լսելով Ալիեւի հռետորաբանությունը՝ ես մի բանի վրա եմ զարմանում: Տարբեր հակահայկական կենտրոններ Իլհամին խնդրել են այս փուլում զուսպ լինել, որպեսզի իրենց խամաճիկն այստեղ վերարտադրվի, բայց Ալիեւի մաղձն այնքան շատ է, որ նա անգամ չի կարողանում այն թաքցնել: Ի տարբերություն իր հոր՝ Հեյդարի, Իլհամը շատ ավելի էմոցիոնալ է: Նա չի զսպում իր էմոցիաները, իսկ հայրը շատ խորամանկ էր ու կարողանում էր տիրապետել իրեն եւ անգամ բարեկամություն խաղալ: Քոչարյանի հետ առաջին շրջանի հանդիպումներում նա խաղում էր, դերասանություն էր անում, իսկ տղան դա էլ չի կարողանում անել: Բայց նաեւ պետք չէ թերագնահատել նրան, ունի ստրատեգիական միտք: Ալիեւի հռետորաբանությունը պետք է մի բանի մասին հուշի, որ թուրքը մնում է թուրք, այս մարդը չի կշտացել եւ չի կշտանալու: Սրանք Արցախով չեն բավարարվելու, ամեն ինչ փորձելու են խլել: Որտե՞ղ եք տեսել, որ բարեկամության պատրաստ երկրի ղեկավարը նման հայտարարություններ անի: Հուսով եմ, որ մենք Նիկոլի եւ Աննայի բաժանման պրիմիտիվ, էժանագին մանիպուլյացիաներից հեռու կմնանք եւ կտեսնենք նշմարվող վտանգները»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲՈԼՈՐԸ ՓՆՏՐՈՒՄ ԵՆ ՆՐԱՆԻՑ ՏԱՐԱՆՋԱՏՎԵԼՈՒ՝ ՓԱԽՈՒՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

«Ես կոչ արեցի մեր ժողովրդին՝ ոտքի կանգնել եւ մեր կառավարությանը հեռացնել իշխանությունից՝ հեղափոխության միջոցով, եթե իրենք համաձայն չեն Ղարաբաղյան շարժման ավարտին: Բայց մինչեւ հիմա ես ՀՀ վարչապետն եմ, եւ, ուստի, ՀՀ ժողովուրդը որոշել է հեղափոխություն չիրականացնել»,- դեմքի ցինիկ արտահայտությամբ Վարշավայում հայտարարում էր վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը: Եթե նա մի քիչ ավելի անկեղծ լիներ, ապա պետք է ասեր, որ «դրանից հետո եղան մարդիկ, ովքեր հավատացին իմ անկեղծությանը եւ որոշեցին ինձ հեռացնելուն ուղղված քայլեր անել», բայց նրանք չգիտեին, որ ես միաժամանակ հրահանգ էի տվել ոստիկանությանը, հատուկ ծառայություններին, դատախազությանը, քննչական կոմիտեին եւ երկրում գործող բազմաթիվ այլ ռեպրեսիվ ֆունկցիաներ ունեցող կառույցների՝ գաղտնալսել, հետապնդել քաղաքացիներին եւ ամենափոքր ընդդիմադիր հակումներ տեսնելու դեպքում կալանավորել նրանց, փակել բանտերում: Արդյունքում ազատությունից եւ ազատ գործելու հնարավորությունից զրկվեցին տասնյակ անմեղ մարդիկ՝ շարքային քաղաքացիներ, ընդդիմադիր գործիչներ, հոգեւորականներ: Հոգեւորականների թեման առանձին հարց չի, նրանք եւ հատկապես Ամենայն հայոց կաթողիկոսը համաձայն չեն Ղարաբաղյան շարժման ավարտի՝ իմ եւ Ալիեւի միջեւ կայացած առքուվաճառքի գործարքը փակված լինելու մասին հայտարարությանը եւ բարձրաձայնում են Արցախի եւ արցախցիների իրավունքների հարցը»:

Երբ ռեժիմը կորցնում է հանրային աջակցությունը, եւ մարդիկ ոչ թե չեն վստահում, այլ ատում են ռեժիմի ներկայացուցիչներին, այդ ռեժիմի պաշտպանության միակ զենքը մնում են կեղծիքը, կաշառքը եւ բռնությունը՝ բլիթի եւ մտրակի քաղաքականություն: Նիկոլ Փաշինյանը՝ որպես շարքային բռնապետ, ոչինչ չի հորինել, նա օգտագործում է արդեն գոյություն ունեցող մեթոդները, ընդ որում՝ ինտուիտիվ, ինքնապաշտպանության բնազով: Կաշառքի մասին շատ է գրվել եւ խոսվել՝ թոշակ եւ աշխատավարձ բարձրացնել, իշխանության տարբեր ներկայացուցիչների կողմից թաղամասեր այցելել եւ գազամատակարարման կամ ասֆալտապատման խոստումներ տալ, հիվանդներին անվճար դեղեր կամ բուժօգնություն տրամադրել:

Ինչ վերաբերում է մտրակին. Ժողովրդավարության բաստիոն հռչակված Հայաստանը վերածվել է բռնապետության բաստիոնի. Հայաստանի շրջապատում, շրջապատող երկրներում չկա որեւէ այլ երկիր, որտեղ իշխանությունը նման ցածր հանրային աջակցություն ունենա, որտեղ ռեժիմը հիմնված լինի բացառապես բռնության վրա: Անգամ Ադրբեջանի նման բռնապետական երկրում, Ալիեւն իր տարած հաղթանակների շնորհիվ, իրական հանրային աջակցություն ունի, որպես հաղթած եւ իր խոստումները կատարած ղեկավար:

Մարդկանց, քաղաքացիների նկատմամբ հսկողությունը, հետապնդումը բարձրացվել են ամենաբարձր մակարդակի՝ Նիկոլի հրահանգով հատուկ ծառայությունները հսկողություն են սահմանել բոլոր ընդդիմադիր կուսակցությունների գրասենյակների նկատմամբ եւ հետեւում են, թե ով է մտնում, ով դուրս գալիս, հետո գնում են այդ մարդկանց, նրանց ընտանիքի անդամների հետեւից, սպառնում են, վախեցնում՝ աշխատանքից ազատել կամ ինչ-որ վնաս պատճառել: Օրերս տեղեկացա, որ «Մեր ձեւով» շարժման Արմավիրի գրասենյակ մտած մի տղայի հորը սպառնացել են աշխատանքից ազատել, եթե տղան համարձակվի երկրորդ անգամ գնալ այդ գրասենյակ:

Արմավիրի Նորապատ համայնքի բնակիչներից մեկը համարձակվել էր բողոքել, որ իր բնակության հասցեում՝ առանց իր գիտության եւ համաձայնության, իրեն անծանոթ 6 մարդ են գրանցել, ակնհայտորեն նախընտրական նպատակներով: Նիկոլական բանդերլոգներն այցելել էին այդ խեղճ մարդուն, որն այդ նույն բանդերլոգների պատճառով երկու ամիս առաջ կորցրել էր երիտասարդ տղային, եւ սպառնացել էին վատ հետեւանքներով: Էս մարդիկ չեն հասկանում, որ Նիկոլի իշխանությունը շատ շուտով չի լինելու, իսկ իրենք մնալու են եւ մնալու են առանց Նիկոլ Փաշինյանի ու նրա կողմից իրենց շնորհված իշխանության:

Նիկոլի՝ իշխանության մնալու միակ հույսը մնացել է երկիրը մի մեծ համակենտրոնացման ճամբար դարձնելը, քանի որ բանտերում այդքան տեղ չկա, մարդկանց ավելի հեշտ է պահել իրենց բնակարաններում՝ տնային կալանքի տակ: Վերջերս կարդացի, որ իշխանությունը 400 հազար էլեկտրոնային հսկողության սարք է պատվիրել, այնպիսին, ինչպիսին հագցնում են տնային կալանքի տակ գտնվող մարդկանց ոտքերին: Առաջին հայացքից մի քիչ անհավանական թիվ համարեցի, մտածեցի՝ դժվար թե այդքան մարդու ուզենան տնային կալանքի ենթարկել: Բայց հետո հասկացա, որ իշխանությունը պահելու համար նույնիսկ այդ թիվը կարող է բավարար չլինել, որովհետեւ իրենց հեռացումը երազողների քանակն արդեն ահռելի չափերի է հասել:

Բոլորը հասկացել են, որ Նիկոլ Փաշինյանն այլեւս անընդունակ է պահել իշխանությունը, բոլորը փնտրում են նրանից տարանջատվելու, փախուստի ճանապարհներ, հրաժեշտի կամ քավության խոսքեր: Ասում են՝ մարդ կա, բարձրաստիճան պաշտոնյա, իր տանը բունկեր է կառուցում՝ այնտեղ երկարատեւ ապաստանի պայմաններով, եւ շինարարներին հանձնարարել է մինչեւ մայիսի վերջն ավարտել աշխատանքները: Բոլոր պարտված ու խայտառակված բռնապետերի վերջը դա է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՆՈՐ ՍԱՆՏԱ ԲԱՐԲԱՐԱ...

1993 թվականի հունվարի 17-ին ԱՄՆ-ի NBC հեռուստաալիքով ցուցադրվեց «Սանտա Բարբարա» հայտնի սերիալի վերջին՝ 2137-րդ սերիան: Ռուսաստանում սերիալը ցուցադրում էր ՊՏՊ հեռուստաընկերությունը՝ 1992 թվականի հունվարի 2-ից մինչեւ 2002 թվականի ապրիլի 17-ը: Այն սկսվեց 217-րդ սերիայից ու ավարտվեց 2040-րդով, այդ իսկ պատճառով շատերը, այդ թվում՝ եւ հայաստանցիներս, չիմացանք, թե ինչպես ավարտվեց սիրված «օճառային օպերայի» հերոսների ճակատագիրը: Բայց, ինչպես ասում են, հայերը թաց տեղ պառկողը չէին եւ 2002 թվականից այնքան սերիալներ նկարեցին, որոնք իրենց սյուժեով ու «խորքով» ոչ միայն չէին զիջում «Սանտա Բարբարային», այլեւ մի քանի գլխով բարձր էին: Այդուհանդերձ, «Սանտա Բարբարայի» ազդեցությունն այնքան մեծ էր, որ այդ սերիալի անվանումը մեզանում «թեւավոր խոսքի» արժեք ստացավ, ու սկսեցինք սիրային պատմությունների մեջ հայտնված մարդկանց կյանքը երբեմն բնութագրել այդ արտահայտությամբ: Մեր գյուղում, օրինակ, գյուղապետը կապվել էր երկու երեխատեր մի կթվորուհու հետ, որն իր հերթին անտարբեր չէր կովերի բժշկի՝ անասնաբույժի հանդեպ: Էս կթվորուհու ամուսինն իմացել էր ու բաժանության հարց էր դրել, ինչին, սակայն, որքան էլ տարօրինակ է, դեմ էին եղել գյուղապետն ու անասնաբույժը: Էս կթվորուհու ամուսինը որ շատ է պնդում բաժանության վրա, հարցը դնում են գյուղխորհրդի լիագումար նիստին: Ամբողջ գյուղը, դաշտերն ու այգիները թողած, կովերին մոռացած, հավաքվում է, թե ոնց անեն, որ Վարդուշը մնա ամուսնու՝ Վաղոյի հետ, բայց միեւնույն ժամանակ գյուղապետ Սերգոն ու անասնաբույժ Վռամը չտուժեն:

- Վաղո, չհամաձայնես, որ արդեն դավաճանել ա քեզ, էլ տան կնիկ չի դառնա, բրախի, թող գնա,- կողքից բզբզում էին Վաղոյի ընկեր տղերքը:

- Ախչի Վարդուշ, ի՞նչ ես գտել էդ Վաղոյի մեջ, որ ոտդ կախ ես գցում, լավ էլ առիթ ա, բաժանվի, պրծի,- խորհուրդ էին տալիս կթվորուհի կանայք:

Հենց գյուղապետը մտավ նիստերի դահլիճ, խոսակցությունները դադարեցին: Սա ելավ ամբիոն եւ, ասես այս պատմությունն իր հետ կապ չուներ, մի երկար ճառ կարդաց ընտանիքի ամրության մասին՝ չմոռանալով ընդգծել, որ ընտանիքը գյուղի ամենաառաջնային օղակն է, կարելի է ասել՝ հիմքը:

- Ուստի,- նշեց նա,- մենք չենք կարող թույլ տալ, որ Վաղոն ու Վարդուշը բաժանվեն…

Շարունակե՞մ պատմել մեր գյուղի «Սանտա Բարբարան», թե՞ հոգնեցիք: Նկատի ունեցեք, որ դեռ 25-րդ սերիայի վրա ենք, իսկ սերիալը ձգվում է մինչ օրս:

Եվ, ուրեմն, տարիներ անց, երբ էս Վարդուշի երեխաներն արդեն մեծացած են լինում, իսկ գյուղում այֆոնի ու սամսունգի պակաս չկար, գյուղը մի օր արթնանում է Վարդուշի «լայվից», թե սիրելի համագյուղացիներ, իմ ու Վաղոյի ամուսնությունն ավարտվեց: Բայց այդ «լայվը» գյուղում հատուկ իրարանցում չառաջացրեց, այսինքն՝ էն էֆեկտը չունեցավ, որովհետեւ մարդիկ այս կամ այն չափով տեղյակ էին Վաղոյի եւ Վարդուշի տան անցուդարձին եւ, կարելի է ասել, պատրաստ էին իրադարձությունների այդպիսի զարգացման: Փոխարենը՝ բոլորը, այդ թվում՝ գյուղապետն ու անասնաբույժը, սրտատրոփ սպասում էին Վաղոյի «լայվին»՝ տեսնես ի՞նչ կասի… Այս նոտայի վրա էլ ավարտվում է 125-րդ սերիան:

Կարող եմ, իհարկե շարունակել, բայց դրա անհրաժեշտությունը, կարծես, չկա արդեն, որովհետեւ Հայաստանում նոր «Սանտա Բարբարա» սերիալ է սկսվել, այն էլ՝ կենդանի մարդկանց կենդանի կատարմամբ: Իմ հերոսների անունները, բնականաբար, պայմանական էին, որովհետեւ ես չէի կարող հարվածի տակ դնել իմ համագյուղացիներին ու մանավանդ՝ գյուղապետին: Նոր սերիալում դրա անհրաժեշտությունը չկա: Բոլորդ եք ճանաչում գլխավոր հերոսներին, որոնք որոշել են բաժանվել կամ «բաժանվել» ու այդ թեմայի շուրջ համախմբել ավելի լայն մասսաների, քան մեր գյուղի հասարակայնությունն է: Իսկ որտեղ կա շատ հանդիսատես, այնտեղ վխտում են նաեւ գովազդատուները… Ի՞նչ փողեր կարող են աշխատել ֆիլմի հեղինակներն ու դերասանները… «Օճառային օպերա»՝



իրական մարդկանցով… Կատա՞ղ եք անում:

ՀԳ. *Ասեմ, որ մեր գյուղի «Սանտա Բարբարան» լավ ավարտ ունեցավ, համարյա՝ երջանիկ: Վարդուշը գբաղեցրեց գյուղապետի ընդարձակ տան առաջին հարկի մի հատվածը, որի պատուհանից հրաշալի տեսարան էր բացվում դեպի անասնաբույժի այգին, իսկ Վաղոն լավ պաշտոն ստացավ գյուղապետարանում:*

ՀԳ1. *Ի՞նչ ասել է «օճառային օպերա»: Դա անգլերեն ասած՝ soap opera-ն է, որ նշանակում է սերիալ, բայց անվանումն առաջացել է հեռուստաթերթերում օճառային ընկերությունների գովազդների առատության պատճառով: Ինչ էլ լինի, ես կուզենայի, որ համապետական նշանակության այս «օճառային օպերան» եւս լավ ավարտ ունենար:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՄԵՂՄԱՑՆԵԼ ՊԱՏԻԺԸ՝ ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՎՃԻՌԸ ՓՈԽԵԼ

11 տարի առաջ Հանքավանում տեղի ունեցած սպանության գործով դատավարությունը դեռ շարունակվում է: Հիշեցնենք, որ 2015 թվականի նոյեմբերի 16-ին Հանքավանի «Տաք ջուր» կոչվող հատվածում հնչած կրակոցների հետեւանքով մահացել էին Հրազդան քաղաքի բնակիչներ՝ 35-ամյա Վահե Գալստյանը եւ 25-ամյա Վարդան Գալստյանը՝ հարազատ եղբայրներ, եւ 27-ամյա Արմեն Հովհաննիսյանը: Սպանության մեջ մեղադրվեց Մարմարիկ գյուղի բնակիչ Հայրապետ Սեփոյանը:



Ըստ մեղադրանքի՝ Սեփոյանը, իր հորեղբորորդի Լեռնիկ Սեփոյանից հեռախոսով տեղեկանալով, որ իր հայր Գագիկ Սեփոյանը Կոտայքի մարզի Հանքավան գյուղի վերջնամասում գտնվող, չգործող՝ նախկին «Արարատ» ճամբարի տարածքում վիճաբանության եւ կռվի մեջ է մտել Հրազդան քաղաքի բնակիչներ՝ եղբայրներ Վարդան եւ Վահե Գալստյանների հետ, ովքեր ծեծի են ենթարկել հորը եւ պատճառել մարմնական վնասվածքներ, վրեժխնդրության շարժառիթով՝ իր «ՎԱԶ 2121» մակնիշի 80 DD 004 համարանիշով ավտոմեքենայով գնացել է նշված տարածք եւ ապօրինի հրազենով՝ «ԱԿ-74» տեսակի, 5,45 մմ տրամաչափի, 1370244 համարի մարտական ակոսափող ինքնաձիգով կրակոցներ է արձակել նշված վայրում գտնվող Վարդան Գալստյանի, Վահե Գալստյանի եւ Արմեն Հովհաննիսյանի ուղղությամբ: Վարդան Գալստյանը մահացել է որովայնի վնասվածքից եւ տրավմատիկ-հեմորագիկ շոկից, Արմեն Հովհաննիսյանը՝ գլխուղեղի վնասվածքից, իսկ Վահե Գալստյանը երեք հրազենային վնասվածք է ստացել, ինչի հետեւանքով եւ մահացել:

Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, որպես պատիժ, Հայրապետ Սեփոյանի նկատմամբ սահմանել է ցմահ ազատազրկում: Ամբաստանյալի պաշտպան Լեւոն Սահակյանը Վճռաբեկ դատարան բողոք է ներկայացրել՝ խնդրելով բեկանել Հայրապետ Գագիկի Սեփոյանի վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.02.2021 թվականի դատավճիռը եւ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության: Վճռաբեկը բողոքը բավարարել է մասնակիորեն՝ ամբաստանյալ Հայրապետ Սեփոյանի վերաբերյալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության եւ վերաքննիչ դատարանների դատավճիռը մասնակիորեն բեկանել է եւ ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

«Նախ, մենք վիճարկում էինք այն հանգամանքը, որ Հայրապետ Սեփոյանը կատարել է իրեն մեղսագրվող արարքը, բացի այդ, նշանակված պատիժն է եղել խիստ, ինչպես նաեւ, նոր ընդունված օրենսգրքի կարգավորումներով՝ ենթադրվող արարքի համար ցմահ ազատազրկում պարզապես չէր կարող նախատեսվել, քանի որ Քրեական օրենսգրքով 2 կամ ավելի անձանց սպանության համար այլեւս ցմահ ազատազրկում նախատեսված չէ: Վճռաբեկ դատարանը մասնակիորեն բավարարել է մեր կողմից ներկայացված բողոքը, եկել է եզրահանգման, որ Հայրապետ Սեփոյանն է կատարել 2 եւ ավելի անձանց սպանությունը, եւ բացակայում է հոգեկան ցնցումը, համապատասխանում է իրականությանը, սակայն պատժի մասով բեկանել է, ուղարկել առաջին ատյան, որպեսզի քննարկի եւ նոր դատավճիռ հրապարակի: Նոր դատավճիռ դեռեւս չկա: Չեմ կարող եւ չեմ էլ ցանկանում կանխատեսումներ անել, բայց կարծում եմ եւ հուսով եմ, որ հնարավորինս մեղմ պատիժ կսահմանվի»,- մեզ հետ զրույցում ասաց ամբաստանյալ Հայրապետ Սեփոյանի պաշտպան **Լեւոն Սահակյանը**:

Սպանված տղաների հոր՝ տուժող Ֆրունզիկ Գալստյանի ներկայացուցիչ **Արման Թամրազյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ նոր օրենսգրքի փոփոխության հիման վրա փորձում են մեղմացնել պատիժը. «Առաջին ատյանի դատարանը ցմահ ազատազրկման է դատապարտել: Վերաքննիչ դատարանը որոշումը թողել է նույնը: Պաշտպանը վճռաբեկ բողոք է տարել այն փաստով, որ Քրեական օրենսգրքով փոփոխություն է եղել՝ մի խումբ անձանց՝ 2 եւ ավելի անձի դիտավորությամբ սպանությունն այլեւս որակյալ հատկանիշ չի հանդիսանում: Նախկինում 2 եւ ավելի անձանց սպանության համար էր մարդը 2-րդ մասով դատապարտվել ցմահ ազատազրկման: Նշել են՝ քանի որ օրենքը մեղմացվել է, հետեւաբար, այդ հիմնավորմամբ ցմահ ազատազրկում չի կարող նշանակվել: Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել, որ նոր օրենքով՝ 2 եւ ավելի անձի սպանությունը թեեւ 1-ին մասերով պետք է որակվի, այսինքն՝ 3 հատ 1-ին մաս պետք է որակվի՝ 3 անձի դիտավորյալ սպանություն, բայց քանի որ նոր օրենքը հնարավորություն է տալիս սպանության 1-ին մասով եւս ցմահ ազատազրկում նշանակել, դա հանցագործությունների համակցություն է, այսինքն՝ մի քանի անձի սպանություն է, հետեւաբար նշել է, որ դա կիրառելի է նաեւ ներկայում, բայց բեկանել է, ուղարկել առաջին ատյան՝ զուտ այդ հիմնավորումով: Օրենքն ասում է՝ դատարանը պիտի հաշվի առնի, որ եթե 1-ին մասերով է մեղադրանքը, մի քանի անձի սպանության մեջ է մեղադրվում, ասենք՝ 3 սպանություն է կատարել անձը, դատարանը պետք է դիրքորոշում հայտնի, շարժառիթը հաշվի առնի, արարքի ավարտվածությունը հաշվի առնի եւ այլ օրենքով նախատեսված որոշակի փաստեր պետք է հաշվի առնի, որ գնահատի՝ զմահ ազատազրկում տա՞ն, թե՞ ցմահ ազատազրկում չտան: Դրա համար էլ ուղարկել է առաջին ատյանի դատարան»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՆ ԿՀԱՐՁԱԿՎԻ՞ ԻՐԱՆԻ ՎՐԱ՝ ԱՄՆ-Ի ՀԵՏ

«Հրապարակի» զրուցակիցն իրանցի քաղաքագետ **Փույա Հոսեյնին** է:

- Իրանի շուրջ օդակը սեղմվում է. մի կողմից, շարունակվում են Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ միջուկային համաձայնագրի շուրջ բանակցությունները, մյուս կողմից, ԱՄՆ նախագահը շարունակում է սպառնալ, որ եթե իրանական կողմը գործարքի չգնա, Իրանին եւ Իրանի ժողովրդին «վատ օրեր կսպասվեն»: Զուգահեռաբար, ԱՄՆ-ն մեծացնում է ռազմական ներկայությունը տարածաշրջանում՝ Իրանի մատույցներում: Կհաջողվի՞ կողմերին ընդհանուր հայտարարի գալ:

- Բանակցություններն ընթանում են: Իրանի ԱԳ նախարար Աբաս Արաղչին դրանք շատ դրական է գնահատել՝ նշելով, որ իրանա-ամերիկյան երկկողմանի համաձայնությունը շատ հասանելի է, կողմերն արդեն տեխնիկական ճշգրտումներ են անում միմյանց հետ, եւ այդ նպատակով երկուշաբթի տեղի կունենա երկու կողմերի մասնագետների հանդիպումը: Բայց Իրանն իր կարմիր գծերը նշել է եւ չի գնա զիջումների, ԱՄՆ-ին թույլ չտալու՝ իրենց բերել Վաշինգտոնի համար ավելի բարենպաստ դաշտ:

- Ամերիկյան ԶԼՄ-ների տվյալներով, Իրանին հարվածելու հետ կապված՝ որոշակի հակասություններ կան զինվորականների, ռազմական ստրատեգների եւ Դոնալդ Թրամփի միջեւ: Վերջինս պնդում է, որ հարվածներ հասցնելու միջոցով Վաշինգտոնը կկարողանա ճնշում գործադրել եւ Իրանին ստիպել՝ գնալ զիջումների: Որոշ գեներալներ, ընդհակառակը, կարծում են, որ նման արդյունքը նույնիսկ հուժկու գրոհից հետո երաշխավորված չէ:

- Թրամփը ռազմական կարճ օպերացիայի կողմնակից է, ինչպես Վենեսուելայի դեպքում: Բայց Իրանը հայտարարել է, թե դա անհնար է՝ ասելով, որ եթե հարձակում լինի երկրի վրա, տարածաշրջանային երկարատեւ պատերազմ կլինի: Իրանն իր պաշտպանողական հայեցակարգը փոխել է հարձակվողական դոկտրինի: Իսկ Թրամփը երկարատեւ պատերազմ չի ուզում, չի ցանկանում զոհեր ունենալ, ընդամենը մտադիր է կարճ արդյունք արձանագրել՝ հաղթանակով դուրս գալով իր բոլոր նախընտրած սցենարներից: Ամերիկյան ռազմական գեներալները կասկածում են, որ նման կարճ օպերացիայով կարող են նման արդյունքի հասնել: Այդ տարաձայնություններն առկա են, եւ նաեւ կարեւոր է տեսնել, թե արդյո՞ք Իսրայելը կկարողանա համոզել ԱՄՆ-ին՝ հարձակվել Իրանի վրա:

- Քննարկվող տարբերակների թվում, ինչպես նշել է ամերիկացի պաշտոնյաներից մեկը, Թրամփի սեղանին է նաեւ Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլա Ալի Խամենեիին, նրա որդուն՝ Մաջթաբային, մի շարք հոգեւորականների ֆիզիկապես վերացնելու սցենարը: Թեհրանում էլ կարծես զգուշանում են նման հեռանկարից. խոսվում է, որ արտակարգ իրավիճակների համար նույնիսկ հատուկ ծրագիր է մշակվում, այդ թվում՝ Խամենեիի մահվան դեպքում նրան հնարավոր փոխարինողների:

- Իրանը բոլոր սցենարների համար պատրաստ է, պլաններ է մշակել՝ լիարժեք պաշտպանելու իր երկիրը: Այդ մասին վկայում է այն, որ արդեն նշեցի՝ փոխել է իր ռազմական հայեցակարգը:

- Ուշագրավ է նաեւ, որ ԻԻՀ խորհրդարանի նախկին նախագահ, Իսլամական Հանրապետության Ազգային անվտանգության գերագույն խորհրդի ղեկավար Ալի Լարիջանին վերջին շրջանում զգալիորեն մեծացրել է իր ազդեցությունը: Նա համարվում է Իրանում որոշում կայացնող առանցքային անձ, թեպետ, իբրեւ Խամենեիի հնարավոր իրավահաջորդի, նրա հնարավորությունները գրեթե զրոյական են, քանի որ հոգեւորական չէ:

- Լարիջանին Իրանի սահմանադրությամբ իրավունք չունի փոխարինելու Խամենեիին, քանի որ, այո, հոգեւորական չէ: Այդ ամենն արեւմտյան քարոզչության հետեւանք է, եւ նման սցենար Իրանում չկա:

- Ամերիկյան Bloomberg-ն ուշագրավ լուր է հայտնել՝ պնդելով, թե Իրանի վրա ԱՄՆ-ի հնարավոր հարձակման դեպքում թուրքական զորքը կարող է ներխուժել Իրանի տարածք: Ըստ աղբյուրի, ԱՄՆ-ն աշխատում է Թուրքիայի անվտանգության տարբեր սցենարների վրա. տարբերակներից մեկը զանգվածային միգրացիայի ռիսկի դեպքում Իսլամական հանրապետության տարածքում բուֆերային գոտի ստեղծելն է: Անկարան հերքում է, իսկ Թեհրանում ունե՞ն նման մտավախություն:

- Իրանը նման մտահոգություն չունի, այն, որ ԱՄՆ-ի հետ պատերազմի դեպքում Թուրքիան կհարձակվի Իրանի վրա՝ ապատեղեկատվություն է: Ամեն դեպքում, Իրանը բոլոր սցենարների համար պատրաստ է եւ զգուշացրել է բոլոր հարեւան երկրներին, որ ամերիկյան ռազմաբազաները, որոնք գտնվում են իրենց տարածքում, հարձակման օրինական թիրախ են դառնալու: Բոլոր դեպքերում, Թուրքիան անվտանգության ռեժիմ է սահմանում, այդ թվում՝ Իրանի հետ սահմանի վրա, եւ այդ ամենին Թեհրանում ուշադիր հետեւում են:

Արա ԱԼՈՅԱՆ

Արհեստը արվեստի մակարդակի հասցրած հայ նկարիչը

Ամերիկահայ հայտնի նկարիչ Մայքլ Արամը ստեղծում է կենցաղային հիասքանչ առարկաներ՝ ձեռքի աշխատանքը համադրելով նրբագեղության հետ: Նա իր ճանապարհը սկսել է Հնդկաստան զբոսաշրջային այցելությամբ եւ համեստ մեկնարկային կապիտալով: Այսօր արդեն գլոբալ ապրանքանիշի ստեղծող է, որը միավորում է հարյուրավոր վարպետների: Ծնվել է 1963 թվականին, ամերիկյան Պրովիդենսում՝ հայկական ավանդապահ ընտանիքում: Մասնագիտական կրթություն ստացել է Եվրոպայում եւ Միացյալ Նահանգներում: Կերպարվեստ է ուսանել Ֆլորենցիայում, ապա, վերադառնալով ԱՄՆ, շարունակել է ուսումնառությունը Նյու Յորքում: Կարիերան սկսել է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի խմբագրությունում՝ որպես գրքերի եւ պաստառների դիզայներ: 1989-ին տուրիստական այցելությամբ մեկնել է Հնդկաստան, որն էլ նրա համար շրջադարձային է դարձել: Հին Դելլիում նա բացահայտել է մետաղամշակման արհեստը, տարվել արհեստավորների աշխատանքով, յուրացրել այդ արհեստի բոլոր նրբությունները: Այստեղ էլ ծանոթացել է վարպետ Մոհամեդ Իդրիսի հետ: Միասին ստեղծել են առաջին աշխատանքը՝ դեկորատիվ բռնակով կոշիկի եղջյուր:

Հետագա տասնամյակներին այն դարձել է մասշտաբային բիզնես՝ համաշխարհային հռչակով: Մայքլ Արամն իրեն անվանում է պատահական բիզնեսմեն, քանի որ նախնական կապիտալը, որով սկսել է բիզնեսը, կազմել է ընդամենը 2 հազար ամերիկյան դոլար: Հարավային Դելիի նրա արհեստանոցում այսօր աշխատում է ավելի քան 200 արհեստավոր, որոնք կյանքի են կոչում նկարչի ամենաբարդ մտահղացումները, իսկ նա ապրում է երկու երկրում միաժամանակ՝ տարվա մի մասն անցկացնելով Հնդկաստանում: Իր գլխավոր ձեռքբերումը Մայքլ Արամը համարում է բարձր արվեստի եւ նյութական արհեստի միջեւ ամուր կամրջի ստեղծումը: Նրա բրենդի փիլիսոփայությունը՝ մարդը պետք է ապրի գեղեցիկ միջավայրում, իսկ տան յուրաքանչյուր առարկա իր մեջ հուզական լիցք պետք է պարունակի: Նրա համար կարեւոր է, որ պահպանվի ձեռքի աշխատանքի հետքը, քանի որ աշխատանքի եզակիությունը հենց դրանում է: Նա է 2016-ին՝ Հռոմի հանգուցյալ Ֆրանցիսկոս պապի՝ Հայաստան այցի ժամանակ պատրաստել հայտնի նվեր «Նոյան տապանը», որն իրենից ներկայացնում է սիմվոլիզմի եւ վարպետության զուգորդում, խաղաղության եւ հույսի խորհրդանիշ: Իսկ ներշնչանքն իր արհեստի եւ արվեստի համար՝ հայազգի նշանավոր նկարիչը վերցնում է բնությունից: Այսօր արդեն «Մայքլ Արամ» ապրանքանիշի գործերը ներկայացված են աշխարհի ավելի քան 600 հայտնի խանութներում, եւ ամեն գործ, որ ստեղծված է նրա կողմից, անկրկնելի է:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վաղը կասեն՝ գնացինք զգաս, հաջորդ անգամ կհայտարարեն, որ եկեղեցի են գնում

*«Հրապարակի» զրուցակիցը հոգեբան **Արկադի Մեհրաբյանն** է:*

- Իշխանությունները հայկական սիմվոլիկայի դեմ պայքարում աննախադեպ են, անգամ թշնամի երկրներն այսպիսի ինտենսիվությամբ չեն պայքարում Առաքելական եկեղեցու, Մեսրոպ Մաշտոցի, Հայոց պատմության, հայկական զինանշանի ու օրհներգի դեմ: Հայ ավանդական ընտանիքն էլ, թեպետ վաղուց էր իշխանությունների թիրախում՝ Ստամբուլյան եւ Լանզարոտեի կոնվենցիաներ եւ այլն, բայց ավանդական ընտանիքի մոդելը մեզանում հարգված էր, եւ հանկարծ հայտարարում են, որ վարչապետի ընտանիքը քայքայվում է: Ի՞նչ տպավորություն ունեք: Որպես հոգեբան՝ ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են այս փուլում նման քայլ անում: Եթե անգամ իսկապես ամուսնալուծվում են, ինչո՞ւ չհամբերեցին մինչեւ ընտրությունները եւ հենց այս շրջանում հայտարարեցին: Ի վերջո, քաղաքական գործիչները չպե՞տք է լինեն ավելի օրինակելի՝ այս առումով:

- Սկսենք սիմվոլիկաներից: Այն, ըստ էության, նոր բան չէ: Մասիս, Մաշտոց… սրանք վաղուց են թիրախում: Ինչքանով տեղյակ եմ, «իրական Հայաստանի» շրջանակներում է այս ամենն արվում, իրենց համար իրականը միայն այն է, ինչն ամփոփված է ներկայիս Հայաստանի սահմաններում: Ես միշտ եմ եղել այն կարծիքին, որ այս մարդը հրահանգներ է կատարում, կոպիտ ասած՝ նրան ինչ ասում են, խելոք անում է: Ինչ վերաբերում է հայկական ընտանիքի մոդելին, ապա հիմա ես չգիտեմ, թե որն է հայկական ընտանիքի մոդելը: Օրինակ՝ Ազգային ժողովի նախագահը մի քանի անգամ ամուսնացել է, ինչն օրինակելի վարքագիծ չէ, սակայն մեր արժեհամակարգն այս առումով՝ պետք է ասեմ, որ բավականին հեղհեղուկ է, մեր ժողովուրդը հիմա չգիտի, թե ինչ արժեքներ է դավանում: Եթե մեր ժողովուրդը հստակ արժեհամակարգերով առաջնորդվի, ապա անպայման դիմադրություն ցույց կտա այն երեւույթներին, որոնք խորթ են իր արժեհամակարգին, բայց քանի որ մեր ժողովուրդը չգիտի այժմ, թե ինչպիսի ընտանիքի մոդել է դավանում, ինչ պոպուլիստական քայլ ասես, որ անում են: Ինչ վերաբերում է քաղաքական գործչի վարքագծին, համեստ լինելուն եւ այլն, ապա այդ ամենը, իրենց լեզվով ասած՝ իրենց «վրով չի»: Հնարավոր չէ, որ այս մարդիկ իրենց համեստ դրսեւորեն, հակառակը՝ պոպուլիզմն իրենից ենթադրում է անհամեստություն, բարձրագոչ հայտարարություններ, ստախոսություն եւ այլն, միայն թե այդ ամենն արվի վստահ: Նրանց կողմից տարվող քաղաքականությունն ամպագոռգոռ հայտարարությունների եւ էժանագին ներկայացումների վրա է հիմնված: Ցուցադրականությունն իրենց թիվ մեկ մեխն է, դրա համար էլ շարունակաբար նույն բանն են անում: Օրինակ, նույն Եկեղեցու շուրջ տեղի ունեցողն այնքան ծիծաղելի է, հանել է մի «Բենթլիով» սրբապիղծի՝ մյուսների դեմ, եւ հայտարարում է, որ Եկեղեցին բարեկարգում են: Լավ, հասկացանք, որ Եկեղեցին այնքան էլ մաքուր կառույց չէ, որ կաթողիկոսն էլ գուցե չի պահպանել Եկեղեցու կանոնները, բայց նույն «բենթլին» մի բան էլ ավելի վատ՝ չի պահպանել այդ նույն նորմերը, ինչպե՞ս է ստացվում, որ վատագույնով վատի դեմ են պայքարում: Իշխանությունների համար այդ հարցերն էական չեն, նրանք վստահ են, որ այդ քայլերով շոու են ապահովում:

- Իսկ ընտանեկան դրամաներ ցուցադրելու համար սա հարմա՞ր ժամանակ էր, կարող էին, չէ՞, սպասել մինչեւ ընտրությունները:

- Հա, բայց իրենց շոու է հարկավոր: Այն պետք է անդադար լինի, եթե անդադար շոու չիրականացվի, իրենց կարող են մոռացության ենթարկել, խնդիրը սա է: Նրանք ակտուալ մնալու խնդիր ունեն, որպեսզի կարողանան ընտրազանգվածին պահել իրենց վերահսկողության տակ:

- Այսինքն՝ Դուք էլ չեք հավատում, որ ամուսնալուծվել են:

- Ե՞րբ էին ամուսնացած, որ ամուսնալուծվեն: Հայտարարում են, որ չկա քաղաքացիական ամուսնություն, վաղն այլ բան կհայտարարեն, կասեն՝ գնացինք զգաս, հաջորդ անգամ կհայտարարեն, որ եկեղեցի են գնում՝ պսակադրվելու: Նրանց հայտարարությունները երբեք վերջնական չեն: Show must go on, ինչպես հայտնի երգում է հնչում: Հաջորդիվ կմտածեն, թե ինչ շոու են ցուցադրելու: Մի քանի օրից կարող ենք այլ թեմայի մասին լսել, եթե նրանք հասկանան, որ ժողովրդի ուշադրությունն այլ հարցի վրա պետք է սեւեռել, ապա դա կանեն, առանց երկար-բարակ մտածելու: Ամենակարեւորը՝ որ ամեն բան ասվի եւ արվի վստահ, չկա այլ մոտիվացիա: Նորմալ քաղաքական ծրագիր այս մարդը չունի, ամեն ինչ քանդում է, վերցնենք 2021-ի ծրագիրը, խոշորացույցով անգամ եթե փնտրենք, դժվար թե գտնենք մի կետ, որն իրականություն դարձած լինի: Ես՝ ինքս, չգիտեմ նման կետ, եթե ինչ-որ մեկը գիտի, թող ասի: Զրո աշխատանք, պոպուլիզմից բացի:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մեծկոտուքից հետո երեխային տեղափոխել են ուրիշ դպրոց

Մեր տեղեկություններով՝ Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների միջեւ ծեծկռտուք է տեղի ունեցել: Աշակերտները ծեծել են դասընկերոջը, հարվածներ հասցրել դեմքին, քթին, որից հետո մայրը երեխային հանել է դպրոցից եւ այլ դպրոց տեղափոխել:

Տեղեկությունը ճշտելու համար կապ հաստատեցինք տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Նարինե Աղասարյանի** հետ: «Երեխաներն իրար վնասել են, ոստիկանություն ենք դիմել: Մեր դպրոցին կցված ոստիկանները ներկայացել են, տարել են երեխաներին եւ ծնողներին, զրուցել են: Հարցը կարգավորվել էր, հետո ծնողը որոշել է, որ դպրոցից տեղափոխի: Չեմ կարող ասել, թե խնդիրը որն էր, ես իրենց ասացի, որ կարող ենք ժամանակ տրամադրել, որովհետեւ երեխաներ են: Այս պահին այդ դասարանում շատ լավ մթնոլորտ է տիրում, որովհետեւ իրավիճակներ կան, որ երեխաները տեսնում են՝ նոր գիտակցում, ավելի ընկերական ու մտերմիկ են դառնում: Չնայած ծնողը չէր ուզում, բայց ես հասկացա, որ պարտավոր եմ հայտնել, եւ համապատասխան մարմիններն իրենց աջակցությունը ցուցաբերեն: Բոլորս պետք է հասկանանք, որ մեր համագործակցությամբ կհասնենք արդյունքի: Մեր ոստիկանները մեր կողքին են եւ աջակցում են»:

Ոստիկանությունը պարբերաբար դպրոցներում հանդիպումներ է ունենում աշակերտների հետ, տեղեկացանք, որ այս անգամ հանդիպելու են նաեւ աշակերտների ծնողների հետ, ձեր դպրոցում կայացել է այդ հանդիպումը: «Վերջին դեպքերից հետո, իմ իմանալով, նախարարությունից հրահանգ են ստացել, որ շրջայց կատարեն: Մենք ունենք դպրոցում կցված համայնքային ոստիկաններ, ովքեր մեզ հետ սերտ համագործակցելով, անդադար աշխատանքներ են տանում, եւ այդ աշխատանքների արդյունքում ունենք բազում հաջողություններ: Այս պահի դրությամբ երեխաներին սովորեցնում ենք միմյանց հանդեպ հարգանք, որովհետեւ դա մեր առջեւ դրված կարեւոր կետերից մեկն է նաեւ»: Տնօրենից հետաքրքրվեցինք, թե արդյոք ՄԻՊ Անահիտ Մանասյանն այցելե՞լ է դպրոց: «Մեզ մոտ չի եկել, հանդիպում է ունեցել ավագ դպրոցի աշակերտների հետ»: Նկատենք, որ այս նախընտրական փուլում ՄԻՊ-ը հանկարծ «արթնացել է» եւ ակտիվ շրջում է մարզերում, հանդիպում ՀԿ-ների ներկայացուցիչների, ավագ դպրոցների աշակերտների եւ տարեցների հետ: Օրեր առաջ էլ Անահիտ Մանասյանը ՔՊ-ական Լիլիթ Ստեփանյանի հետ Հրազդանում էր:

Հասկանալի է, թե այս օրերին ՔՊ-ականներն ինչու են շրջում տարբեր կառույցներով, հանդիպում մանկավարժների, աշակերտների, տարեցների, երիտասարդների հետ, իրենց իսկ խոսքերով՝ «բազմաբովանդակ ու հետաքրքիր զրույցներ ու քննարկումներ ունենում»: Արդյոք մարդու իրավունքների պաշտպանին չէ՞ր հետաքրքրում Հրազդանի թիվ 11 դպրոցում տեղի ունեցած միջադեպը: Գալ Հրազդան ու չայցելել այն դպրոցը, որտեղ խնդիր կա՝ ծեծ ու անհաշտ մթնոլորտ, չզրուցել աշակերտների եւ ծնողների հետ, չբացատրել երեխաների իրավունքները: Չէ՞ որ երեխաների իրավունքների պաշտպանությունն այն քիչ ոլորտներից է, որով ՄԻՊ-ը կարող է անարգել զբաղվել՝ չմտնելով քաղաքական դաշտ: Իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի ուժով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989-ի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաեւ՝ երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում եւ պաշտպանություն:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄՈՏ 3 ՏԱՐԻ ՔՆՆՈՒՄ ԵՆ, ՎԵՐՋԸ ՉԻ ԵՐԵՎՈՒՄ

2023թ. մայիսի 25-ից Հակակոռուպցիոն դատարանում ընթանում է Վարդան Ղալումյանի, Իջեւանի պատկերասրահի նախկին տնօրեն Կարինե Հովհաննիսյանի, նախկին փոխտնօրեն Սամվել Մելքումյանի եւ հաշվապահ Լյուդմիլա Բեկնազարյանի դատավարությունը: Ըստ մեղադրական եզրակացության՝ Վ. Ղալումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Կարինե Հովհաննիսյանի ամուսնու՝ Իջեւանի նախկին փոխքաղաքապետ Սուրեն Մանուկյանի հետ գտնվելով ընկերական փոխհարաբերությունների մեջ, վերջինիս կողմից 2017-ին Երեւան տեղափոխվելուց հետո «դիտավորությամբ» հսկողություն չի իրականացրել «Իջեւանի վերնատուն պատկերասրահ» ՓԲԸ-ի տնօրեն Կ. Հովհաննիսյանի կողմից 2017 թ. հոկտեմբերի 1-ից մինչեւ 2018 թ. հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքի չներկայանալու եւ աշխատանքային պարտականությունները չիրականացնելու նկատմամբ, ինչի հետեւանքով Կ. Հովհաննիսյանը... Իջեւանի համայնքապետարանի կողմից հիշյալ ընկերությանը հատկացված դրամական միջոցներից Իջեւանի համայնքի ավագանու որոշումներով սահմանված դրույքաչափերով նախատեսված տնօրենի աշխատավարձ է ստացել՝ 698 հազար 365 ՀՀ դրամ, եւ «յուրացրել», որով էական վնաս է պատճառվել Իջեւանի համայնքապետարանի օրինական շահերին:

Բացի այդ, Կ. Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել նաեւ այն բանի համար, որ «Իջեւանի վերնատուն պատկերասրահ» ՓԲԸ-ում 2013թ. ապրիլի 10-ից որպես լրագրող աշխատող Լիա Ճաղարյանի կողմից 2016թ. հունիսի 4-ից մինչեւ 2018թ. հուլիսի 20-ն աշխատանքի չներկայանալու եւ աշխատանքային պարտականությունները փաստացի չկատարելու պարագայում, վերջինիս նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց չի կիրառել, աշխատանքից չի ազատել, աշխատանքային պայմանագիրը չի լուծել եւ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ հանձնարարել է հաշվարկել եւ Լիա Ճաղարյանին վճարել է... լրագրողի աշխատավարձ՝ 1 մլն 74 հազար 997 ՀՀ դրամի չափով: Քրեական գործով մյուս 2 ամբաստանյալներն Իջեւանի պատկերասրահի նախկին փոխտնօրեն Սամվել Մելքումյանը եւ հաշվապահ Լյուդմիլա Բեկնազարյանն են: Այս դատավարության ընթացքում Սամվել Մելքումյանը ծանր հիվանդությունից մահացել է: Ի դեպ, Լյուդմիլա Բեկնազարյանը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր Լիպարիտ Մելիքջանյանի մայրն է:

Մեղադրյալներին մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, յուրացման, վատնման, պաշտոնեական կեղծիքի, փաստաթղթեր կեղծելու եւ այդ գործողություններին օժանդակելու հոդվածներով: Մեղադրյալները չեն ընդունում իրենց մեղքը՝ գործը համարելով շինծու: Նրանց նկատմամբ խափանման միջոց էին ընտրվել բացակայելու արգելքը եւ չհեռանալու մասին ստորագրությունը: Փետրվարի 27-ի նիստում հարցաքննվեցին քրեական գործով վկաներ, Իջեւանի համայնքապետարանի կրթության, մշակույթի բաժնի պետ Լիլիթ Ղալումյանը, «Իջեւանի վերնատուն պատկերասրահի» նախկին աշխատակից Հովսեփ Աբովյանը, Բերդ քաղաքի բնակիչ Ժենյա Գիժլարյանը: Վկաները հայտնեցին, որ պատկերասրահի տնօրեն Կարինե Հովհաննիսյանը եւ Լ. Ճաղարյանը ՝ որպես այդ հիմնարկի լրագրող, իրենց աշխատանքը կատարել են, նրանց աշխատանքից այդ ժամանակ դժգոհություններ չեն եղել: Լիա Ճաղարյանի լրագրողական աշխատանքը նաեւ ենթադրում է, որ նա կարող էր ստեղծագործական գործի բնույթի առումով որոշ ժամանակ չգտնվել հիմնարկում: Ուշագրավ էր Բերդի բնակիչ Ժենյա Գիժլարյանի ցուցմունքը: Նա դատարանում հայտնեց, որ Լիա Ճաղարյանը մոտ մեկ տարի Բերդ քաղաքի բազամաբնակարան շենքում իր հարեւանն է եղել, սակայն ինքը չգիտեր Լիայի անունը: Նա ասաց, որ Լիայի ու նրա ամուսնու բնակարանից փոքր երեխայի ձայն էր լսում: Ճաղարյանը վկային հարցրեց՝ դա աղջի՞կ երեխայի, թե՞ տղայի ձայն էր, վկան ասաց՝ աղջկա: Լիա Ճաղարյանն ասաց, որ իր աղջիկ երեխան մի տարի առաջ է ծնվել, իսկ իր առաջնեկ երեխան տղա է: Դատական հաջորդ նիստը նշանակվեց ապրիլի 8-ին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ինչով է ավարտվելու հակամարտությունը

Իլոն Մասկի xAI ընկերությունը, որը զբաղվում է արհեստական բանականության տեխնոլոգիաների մշակմամբ եւ գործարկմամբ, պայմանագիր է կնքել Պենտագոնի հետ, որը ենթադրում է Grok չաթ-բոտի կիրառում ռազմական գերատեսչության փակ ինֆորմացիոն համակարգերում: Այս մասին հայտնում է Axios պարբերականը: Համաձայն հաղորդման, մինչ այժմ միակ նեյրոցանցը, որը կիրառվել է Պենտագոնի կողմից հետախուզական գործունեության, սպառազինությունների մշակման եւ օպերացիաներ իրականացնելու համար, եղել է Anthropic ընկերության Claude մոդելը: Սակայն այս տարվա հունվարի վերջին, ինչպես հայտնել են մի շարք առաջատար միջազգային լրատվամիջոցներ, տարաձայնությունները Պենտագոնի եւ այդ ընկերության միջեւ դարձել են փակուղային: 200 միլիոն դոլարի պայմանագրի բանակցությունները հայտնվել են պատային վիճակում: Axios-ը դեռ փետրվարի կեսերին նաեւ հայտնել էր, որ այդ իրավիճակում Պենտագոնում որոշում են կայացրել դադարեցնել համագործակցությունը Anthropic-ի հետ եւ այն ներառել «ոչ հուսալի մատակարարների» ցանկում: Բանն այն է, որ Anthropic-ը հրաժարվել է տրամադրել իր Claude համակարգը՝ բոլոր օրինական նպատակների համար՝ արգելելով, որ այն կիրառվի զանգվածային հետապնդումներ իրականացնելու եւ ամբողջովին ավտոնոմ սպառազինություններ ստեղծելու մեջ: Այս պայմաններին, ի դեպ, Մասկի ընկերությունը համաձայնել է: Axios-ն ընդգծում է, որ դեռեւս պարզ չէ, թե Մասկի xAI ընկերությունը կկարողանա՞ արդյոք ամբողջովին փոխարինել Anthropic-ին, եւ այլ փոխարինման գործընթացն ամբողջականացնելու համար որքան ժամանակ կպահանջվի: Պարզ է մի բան, որ Claude-ի փոխարինումը Grok-ում շատ բարդ եւ բավականին ժամանակատար պրոցես է լինելու:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 28.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՈՉ ԹԵ 100 ՏՈԿՈՍՈՎ ՉԿՈՌՈՒՄՊԱՑՎԱԾ, ԱՅԼ 100 ՏՈԿՈՍՈՎ ՀՀ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ ԾԱՌԱՅՈՂ

Երբ լսում ես կոռուպցիայի դեմ պայքարն ու պետությունը նույնացնող այս իշխանությունների նախընտրական թեզերը, երբ տեսնում ես, թե ինչպես են սրանք այս պետությունը մեկ հարցանոց օրակարգով պետություն դարձնում, ակամայից մտածում ես, որ այս մարդիկ ոչ միայն չեն հասկանում, թե ինչ է պետությունը, այլ նաեւ չգիտեն, թե ինչի համար է պետք, որ պետություն ունենաս:

Գիտակցում ես, որ եթե սրանք այսքան բան տեսնելուց հետո անգամ չեն հասկացել, որ ժողովրդի սպասելիքն իրենցից ոչ թե կոռուպցիայի դեմ ավելի շատ պայքարելն է, այլ այդ պայքարը չշահարկելը, ուրեմն չեն էլ հասկանա, որ պետությունը ոչ թե այն է, որը պետք է միայն կոռուպցիայի դեմ պայքարի, այլ՝ այն, որը կոռուպցիայի դեմ պայքարն իր առօրեական խնդիրներից մեկը կհամարի:

Այս իմաստով, այն, որ Հայաստանի օրվա իշխանությունները շատ են ուզում որպես այս երկրի հակակոռուպցիոն պայքարի առաջամարտիկ երեւալ, արդյոք ավելի ճիշտ չէ՞ն վարվի, եթե կոռուպցիայի դեմ պայքարի օրակարգը Հայաստանի Հանրապետության միակ օրակարգը դարձնելուց առաջ, իրենց դրսի պատվիրատուներին հարցրած լինեին, թե ինչ լավ բան է չկոռումպացված երկիր ունենալը Հայաստանին սովորեցնելուց առաջ ապացուցել, որ իրենք կարողացել են իրենց երկրները չկոռումպացված երկիր դարձնել: Թե՞ չկոռումպացված երկիր ունենալու առավելությունները մեզ «սովորեցնողներին» այդ հարցը տալու փոխարեն, նրանք եւս որոշել են կոռուպցիայի դեմ պայքարի «օգտակարության» մասին իրենց գիտելիքներով ու հմտություններով մեզ զարմացնել:

Եթե իրոք այդպես է, ապա մենք շատ ենք ցավում ոչ միայն նրա համար, որ այս երկիրն այսպիսի իշխանություն ունի, այլեւ ցավում ենք նաեւ այս իշխանությունների համար, որ նրանք, արդեն 8 տարի իշխանություն լինելով, այդպես էլ մնացել են 2018 թվականի իրենց պատկերացումների տիրույթում: Մնացել են, որովհետեւ, ի տարբերություն հայ հասարակության, մինչեւ հիմա չեն էլ հասկանում, որ 2026 թվականին արդյունավետ իշխանություն լինելու համար բավարար չեն միայն 2018 թվականի պատկերացումները: Բավարար չեն, որովհետեւ 2026 թվականի Հայաստանում ինչպես արդյունավետ իշխանություն, այնպես էլ կոռուպցիայի դեմ պայքարում հաջողություն ունեցող իշանություն լինելու համար պետք է ոչ թե ուրիշներին չկոռումպացված երկիր լինելու առավելությունները բացատրել, այլ սեփական թիմի արարքներն ու գործողությունները տեսնել ու ճիշտ գնահատել:

Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին ու Հայաստանի քաղաքացուն, ապա, ինչպես Հայաստանի օրվա իշխանությունները, այնպես էլ նրանց դրսի պատվիրատուները պետք է վերջապես հասկանան, որ, ի տարբերություն իրենց, Հայաստանն ու Հայաստանի քաղաքացին այլեւս լավ գիտեն, որ այսօրվա Հայաստանին ոչ թե հարյուր տոկոսով կոռուպցիայից զերծ, այլ հարյուր տոկոսով Հայաստանի ու հայության հզորացմանն ու ուժեղացմանը ծառայող տնտեսություն է պետք:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am